Ազգ
Azg
30 ՀՈՒՆՎԱՐ - 5 ՓԵՏՐՎԱՐ 2026 ՈՒՐԲԱԹ 003(5871)
ISSN: 1829-1651
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## Ադրբեջանը բանտ է լրագրողների համար

Հունվարի 26-ին «Միջազգային համաներում» կազմակերպությունն ահազանգում էր կեղծ մեղադրանքներով ձերբակալված «Մեյդան» հեռուստաընկերության 12 ադրբեջանցի լրագրողներից առնվազն 3-ին անհատաղ բուժօգնությունից զրկելու մասին, պահանջում անհապաղ ազատ արձակել լրագրողներին: Հունվարի 28-ին «Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպությունը ժամը 10-18-ը Բեռլինում բողոքի հանրահավաք, ելույթներ, մամուլի ասուլիս էր հրավիրել Ալեքսանդրպլացում: Բեռլինի, Փարիզի եւ Բեռնի կենտրոնում ինտերակտիվ միջոցներով՝ ադրբեջանական բանտախցերը կրկնօրինակելով ներկայացվում էին ադրբեջանցի 25 անկախ լրագրողների բանտարկության դաժան պայմանները: Մամուլի ազատության ներկայիս ինդեքսում Ադրբեջանը 180 երկրների շարքում 167-րդ տեղում է:

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ**
**Գերմանիա**

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Հայ եկեղեցին գիտի հաղթահարել դժվարությունները

Ամենայն հավանականությամբ շուտով մենք ականատես կլինենք Հայ եկեղեցու դեմ Ն. Փաշինյանի ու նրա խմբակի ձեռնարկած արշավի հերթական ակտիվացմանը նորահնար պատրվակով՝ կալվածային սեփականության իրավունքի «չարաշահման» ու հարակից ամբաստանությունների շուրջ «կարված» գործերի քննության:

Չէ՞ որ մոտենում է Ավստրիայի Սանկտ Փյոթեն քաղաքում տեղի ունենալիք Եպիսկոպոսական ժողովի ժամկետը՝ փետրվարի 16-19-ը: Կայանալու եւ հեզասահ ընթանալու դեպքում, Ամենայն Հայոց Հայրապետի հրավերով եւ ավելի քան 50 եպիսկոպոսների մասնակցությամբ գումարվելիք այդ ժողովը, փաստորեն, անկախ արդյունքներից, ի դերեւ է հանելու Նիկոլի ու նրա խմբակի ամիսների աշխատանքը՝ Հայ եկեղեցին ներսից պառակտելու, վախի ու գրավիչ խոստումների միջոցով հերձվածական խմբակներ ստեղծելու, Մայր աթոռը թուլացնելու եւ, վերջապես, նախագծված հայտնի «ճանապարհային քարտեզի» կետերը ի կատար ածելու անդուլ ջանքերը, խարդավանքները: Հետեւաբար, ըստ նրանց, պետք է եկեղեցու վերին իշխանությանը եւ ուխտապահ եպիսկոպոսներին «մատուցել» նոր, մտահոգիչ խնդիրներ՝ կապված եկեղեցապատկան կալվածների ճակատագրին:

Բացի այդ, Նիկոլն ունի նաեւ մեկ այլ առաջադրանք, թերեւս՝ ինքնառաջադրանք. խրտչեցնել, վախեցնել, Եկեղեցուց հեռու պահել բոլոր բարերարներին ու նվիրատուներին՝ մատնացույց անելով, օրինակ, **Սամվել Կարապետյանին**, որ պատժվում է աստվածահաճո գործ կատարած լինելու համար: Իսկ Եպիսկոպոսական ժողովի բարեհաջող ավարտի դեպքում, բարեկարգության վերահաստատման պայմաններում, բոլոր բարեգործները, հատկապես նրանք՝ ովքեր որեւէ առնչություն չունեն ներհայաստանյան բիզնեսի հետ, ինքնավստահ՝ կարող են իրենց նյութական նպաստը բերել Հայ եկեղեցու հզորացման գործում, մանավանդ եթե Եկեղեցին նորանոր ծրագրեր ի գործ դնելով ծավալի իր գործունեության դաշտը կրթության, առողջապահության, երիտասարդական ու սոցիալական բնագավառում: Նիկոլը Նիկոլ չի լինի, եթե թույլ տա նման գործունեությունը, այդ հարցում նա ավելի անզիջող է, քան... Ընկ. Փանջունին, որն ընդամենը «մի քիչ փող ուղարկեք» էր գրում իր զեկուցագրերի վերջնամասում: Մինչդեռ «մի քիչը» շա՜տ քիչ է Նիկոլի ու նրա համակերների (քիչ էր մնում սխալվեի ու «համակիրներ» գրեի) համար: Դա շատ հին, բնածին ու բնատուր մոտեցում է: Նա շա՜տ է սիրում փողը, շա՜տ փողը, որը նրա վերջին ու միակ ապավենն է պետության ու ժողովրդի գլխին նստած մնալու համար:

Բայց խոստովանենք նաեւ, որ Նիկոլի յուրաքանչյուր գործողություն, գոնե առերեւույթ, պետք է ունենա օրինավոր եւ օրենսդրական տեսք: Նա այս անգամ էլ հոգացել է այդ մասին, մանավանդ որ ձեռքի տակ ունի համապատասխան գործիքը՝ Ազգային ժողովը, որը ես վաղուց բնութագրել եմ որպես «խորհրդարանական բռնապետություն» (Parlamentarian Dictatorship): Նա դեռեւս դեկտեմբերի 25-ին կառավարության նիստում (այսինքն՝ ինքն իր մեջ) անցկացրել էր «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ, որը շա՜տ հեշտությամբ ընդունվեց ԱԺ հունվարի 19-ի նիստում եւ որը առանց սեփականության իրավունքի Մայր աթոռին հողեր տրամադրելու կարգի փոփոխություն է նախատեսում, մինչդեռ, թռուցիկ կերպով ասենք, եկեղեցապատկան հողերն ու կալվածները մի քանի կարգի են իրականում՝ **Տրդատ Գ** թագավորի ժամանակներից ի վեր Եկեղեցուն հասկացված սեփական տարածքները, ներառյալ շատ ավելի ուշ՝ **Ներսես Աշտարակեցի** կաթողիկոսի վերցրած տարածքները՝ ներառյալ Ս. Գայանե տաճարին կից գտնվող պուրակներն ու լճակը, իսկ շատ ավելի ուշ՝ սովետական իշխանության վերջին տասնամյակներին, ինչպես նաեւ անկախության շրջանում հաջորդական մեր երեք նախագահների տարիներին հասկացված, ներառյալ՝ Մայր աթոռի գնած տարածքները, որոնցից յուրաքանչյուրը, ենթադրում եմ, սեփականության իրավունքի այլեւայլ կատեգորիաների են պատկանում: Հետեւաբար Նիկոլ Փաշինյանի պես մարդու համար դժվար չի լինելու «ձեւը գտեք» հրահանգով պետականացնել դրանց մեծ մասը ու Հայ եկեղեցին զրկելու իր 17 դարերի հարստություններից եւ ունեցվածքից:

Եվ այսպես, մոտավորապես 125 տարի հետո Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին նորից կանգնած է իր կալվածները կորցնելու վտանգի առաջ, այն ժամանակ Նիկոլայ 2-րդ ցարի, այժմ՝ Նիկոլ Փաշինյանի ընչաքաղցության, բռնապետական նկրտումների հետեւանքով: Հետեւաբար մեծագույն պատասխանատվություն է ակնկալվում առաջիկա Եպիսկոպոսական ժողովի յուրաքանչյուր անդամից միահամուռ կեցվածքով, վայելելով նաեւ համայն հայության նեցուկը, դիմագրավելու եւ հաղթահարելու ներկա եւ հետագա բոլոր փորձանքներն ու փորձությունները:

Պատմության ընթացքում Հայ եկեղեցին քանիցս տվել է դրա ապացույցը:

**ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ**

## Մի օր ընտրողին մարդ կհամարեն՝ հաջորդ հինգ տարին մոռանալու համար

**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**




Մեր քաղաքականների նման մենք էլ այս անգամ մեզ դնենք այսպես կոչված «շլանգի» տեղ եւ մոռանալով Իրանի շուրջ ծայրահեղ սրված իրավիճակը՝ անվրդով տեսքով մեր ներքաղաքական ներկա պահի գործընթացներին հայացք նետենք:

Բայց չէ՝ գոնե նշենք, որ նույնիսկ մեր երկրի ներսում կատարվողը կախված է լինելու մոտակա օրերի իրանյան զարգացումներից, այն բանից, թե կիարվածե՞ն Իրանին, թե՞ այնուամենայնիվ՝ Իրանն ու ԱՄՆ-ը կնստեն բանակցությունների սեղանի շուրջ, ըստ այդմ սցենարները մեր տարածաշրջանում կարող են տրամագծորեն տարբեր զարգացումներ ունենալ:

Այն, ինչ խոսելու ենք ստորեւ, հարցերը խաղաղ ճանապարհով լուծելու սցենարի ներքո է:

Ավելի վաղ կարապետյանական ընդդիմության ելույթներով (**Նարեկ Կարապետյանի** հարցազրույցը հատկապես Հանրային հեռուստատեսությանը), երեկ էլ **Ռոբերտ Քոչարյանի** ասուլիսով նախընտրական սեզոնը լիարժեք բացված համարենք: Ըստ Քոչարյանի՝ ֆունդամենտալ հարցերի շուրջ ընդդիմադիր տարբեր թեւերում տարբեր հայացքներ ունեցող մարդկանց խոսույթը գրեթե նույնն է, այնպես որ լուրջ համագործակցության, թեզերի սինքրոնացման դաշտ եւ խոշոր նախընտրական բլոկներ ձեւավորելու հնարավորություն նա տեսնում է: Ըստ որում՝ Քոչարյանն ինքը կարող է լինել «Հայաստան» դաշինքի առանցքի շուրջ միավորված բլոկի վարչապետի թեկնածուն, եթե սոցիոլոգիական հարցումները, որ արդեն պատվիրվել են, այլ թեկնածուի նպատակահարմարությունը վեր չհանեն: Նա խոսում էր երեքչորս բլոկով ընտրություններին ընդդիմության մասնակցության մասին:

Իշխանության տեսակետները եւս այս երկու օրը թարմացան **Նիկոլ Փաշինյանի** ուղերձներում եւ ԵԽԽՎ նստաշրջանում **Արարատ Միրզոյանի** ելույթներում, որտեղ նրանց հայտնի թեզերն են եւ վախը, որ ընդդիմությունը կարող է վերցնել հիբրիդային պատերազմի դրոշն իշխանության դեմ պայքարում ու Հայաստանում առկա ժողովրդավարական գործիքները կիրառելով պայքարել: ԵԽԽՎ-ում Արարատ Միրզոյանի ելույթում եվրոպական սովորական շատախոսության մեջ խոսք անգամ չկար հարյուրհազարից ավելի արցախցիների էթնիկ զտման, նրանց կյանքի եւ ունեցվածքի, վերադարձի իրավունքի մասին, այդ մարդիկ հիմա ՀՀ-ում չե՞ն ապրում, թե՞ մարդ չեն, որ չհրացված իրավունքներ ունենան ու ԵԽԽՎ-ում նրանց իրավունքներից խոսեն:

Այդ մարդիկ ընտրողներ են հիմա Հայաստանում եւ մասնակցելու են մոտակա ընտրություններին, իսկ մեր ներքեւի վերլուծությունը ընտրողների մասին է, նրանց մասին, ում իրենց հնարավոր բլոկների եւ համագործակցությունների տուրեւառներում մոռանում են մեր քաղաքականները, համարելով, որ եթե իրար հետ համագործակցեն, իրար հետ համաձայնվեն, ընտրողն ո՞վ է, որ իրենց գրպանում չլինի:

⇨3

## Իրանի շուրջ լարվածություն
### Տարածաշրջանային եւ միջազգային արձագանքներ

**ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ**
**Իրանագետ**

ԱՄՆ նախագահ **Դոնալդ Թրամփը** երկուշաբթի «Axios»-ին տված հարցազրույցում հայտարարել է, որ Իրանի շուրջ իրավիճակը «շարունակաբար փոփոխվում է», քանի որ տարածաշրջան է ուղարկվել «մեծ ռազմածովային ուժ»:

Միաժամանակ նա ընդգծել է, որ իր համոզմամբ Թեհրանը իրականում շահագրգռված է համաձայնության հասնելու մեջ:

Թրամփի խոսքով՝ «նրանք ցանկանում են համաձայնության գալ: Դա ինձ հայտնի է: Բազմիցս կապ են հաստատել: Նրանք ուզում են երկխոսել»:

Այս համատեքստում Սպիտակ տան մի պաշտոնյա նույնպես նշել է, որ եթե Իրանը ցանկություն հայտնի կապ հաստատել Վաշինգտոնի հետ, Միացյալ Նահանգները «պատրաստ է ներգրավվել երկխոսության մեջ»:

Բանակցությունների դուռը բաց պահելով հանդերձ, Դոնալդ Թրամփը հունվարի 27-ին շտապեց տեղեկացնել՝ «Եւս մի գեղեցիկ արմադա (նավատորմ) այս պահին ուղղություն է վերցրել դեպի Իրան»:

Որոշ փորձագետներ, անդրադառնալով Թրամփի կողմից հստականական ծագում ունեցող «արմադա» (Armada) բառի օգտագործմանը, որը նշանակում է «հսկա եւ գերազանց զինված ռազմական նավատորմ», ենթադրում են, որ խոսքը ավիակիրներից, կործանիչ նավերից, աջակցող ռազմանավերից ու սուզանավերից բաղկացած խոշոր ռազմական կազմավորման մասին է:

Իրանի Արտաքին գործերի նախարարության խոսնակ **Էսմայիլ Բաղային** իր ամենշաբաթյա ճեպազրույցում, անդրադառնալով Իրանի շուրջ ծավալվող վերջին զարգացումներին, հայտարարել է, որ Իրանը շարունակում է բախվել «ընդգրկուն հիբրիդային պատերազմի», որը ձեւավորվել է անցյալ տարվա հունիսին Իսրայելի եւ ԱՄՆ-ի ռազմական ագրեսիաների հետեւանքով:

Նրա խոսքով՝ «ԱՄՆ-ի եւ Իսրայելի կողմից հնչող սպառնալիքներն ու անհիմն հայտարարությունները շարունակվում են»: Այս համատեքստում Բաղային անդրադարձել է Թրամփի վերջին հայտարարություններին, ինչպես նաեւ այն հաղորդումներին, ըստ որոնց ԱՄՆ-ի ռազմական նավերը շարժվում են դեպի Պարսից ծոց:

⇨2

# Դեռ տեսնելու ենք ներկայի շրջադարձը

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ**

**Գերմանիա**

Հունվարի 27-ին Բեռլինում Բունդեսթագի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ **Արմին Լաշեթի** հրավերով, ՀՀ դեսպան **Վիկտոր Ենգիբարյանը**, Ադրբեջանի դեսպան **Նասիմի Աղաեւը**, Գերմանիայի ԱԳ նախարար **Յոհան Վադեֆուլը** ելույթ են ունեցել «Շրջադարձային ժամանակ Հարավային Կովկասում. Պատմական խաղաղություն Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ, Գերմանիայի դերը եւ Եվրոպա- Արեւելք նոր կապը» խորագրով քննարկմանը: Առաջին անգամ է նման վերնագրով ՀՀ-ի եւ Ադրբեջանի դեսպանի մասնակցությամբ քննարկում կազմակերպվում: Թեեւ ՀՀ դեսպանության ֆբ էջում տարածված հաղորդագրության, «Ազերթաջի» հրապարակման մեջ նշվում է, թե «միջոցառմանը ներկա էին տասնյակ փորձագետներ, պատգամավորներ եւ լրատվամիջոցներ», սակայն գերմանական մեդիայի արձագանք չգտանք: Սույն միջոցառման վերնագիրը փնտրեցինք որոնողական ցանցում, մեր գերմանացի գործընկերները չեն անդրադարձել «շրջադարձին», «պատմական» բնորոշումն էլ չի գրավել նրանց: Պատմական որակել էին Մյունխենի երկրամասային բարձրագույն դատարանի հունվարի 22-ի վճիռը, որով հաստատվեց, թե Բունդեսթագի նախկին պատգամավոր քրիստոնյա-դեմոկրատ **Աքսել** **Ֆիշերը** Ադրբեջանից կաշառքի դիմաց Ալիեւին է ծառայել, ԵԽԽՎ-ում ԼՂ-ի վերաբերյալ բանաձեւերում գործել է հօգուտ Ադրբեջանի: Սույն վճիռը նախադեպ է, գրել ենք «**Ազգի**» հունվարի 23-ի համարում, կանդրադառնանք նաեւ առաջիկայում: «Շրջադարձային ժամանակ Հարավային Կովկասում. Պատմական խաղաղություն Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ, Գերմանիայի դերը եւ Եվրոպա -Արեւելք նոր կապը» խորագրով քննարկման մասին համառոտ իրազեկել է ՀՀ դեսպանությունը, իսկ ադրբեջանական պետական «Ազերթաջ» բազմալեզու գործակալությունը մի քանի անդրադարձ է արել:




*ԳԴՀ արտգործնախարարը ելույթի պահին:*
*Լուսանկարը՝ ԳԴՀ-ում ՀՀ դեսպանության ֆբ էջից:*



Ըստ Բեռլինում ՀՀ դեսպանության հաղորդագրության, «դեսպան Ենգիբարյանն իր ելույթում շնորհակալություն է հայտնել ԳԴՀ կառավարությանը, անձամբ ԱԳ նախարար Վադեֆուլին, որ նախկինում Բունդեսթագի Գերմանիա-Հարավային Կովկաս բարեկամական խմբի նախագահն էր, նախորդող ժամանակահատվածում կառուցողական աշխատանքի եւ աջակցության համար»:

«Գերմանիայի արտաքին գործերի նախարարը ելույթ է ունեցել միջոցառման ժամանակ», վերնագրել է «Ազերթաջը» հունվարի 28-ին: «Միջոցառմանը, որն իր տեսակի մեջ առաջինն էր Գերմանիայում, մասնակցել են Գերմանիայի կառավարության ներկայացուցիչներ, Բունդեսթագի անդամներ, փորձագետներ, լրագրողներ եւ Գերմանիայի քաղաքական, տնտեսական եւ ակադեմիական ոլորտների ականավոր գործիչներ», գրում է նույն աղբյուրը: Ըստ «Ազերթաջի», ԳԴՀ արտաքին գործերի նախարար Վադեֆուլն ասել է, թե Բունդեսթագում Գերմանիա-Հարավային Կովկաս խորհրդարանական խմբի նախագահ լինելով՝ լավատեղյակ է հայ-ադրբեջանական հակամարտությանը, ժամանակին այդ հարցը պարբերաբար քննարկել է երկու երկրների դեսպանների հետ: Գերմանիայի ԱԳ նախարարն ընդգծել է, որ վերջին մեկ տարվա ընթացքում խաղաղության գործընթացում առաջընթացը մեծ նվաճում է երկու երկրների համար, նշանակալի իրադարձություն Եվրոպայի պատմության մեջ: Վադեֆուլը նշել է, որ Գերմանիան պատրաստ է շարունակել իր ներդրումը այս գործընթացում: Նա նաեւ ընդգծել է, որ խաղաղությունը լայն հնարավորություն է բացում երկու երկրների՝ ԵՄ-ի հետ կայուն եւ հուսալի հարաբերություններ կառուցելու համար: Բունդեսթագի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Արմին Լաշեթը բարձր է գնահատել այն փաստը, որ նման միջոցառում առաջին անգամ է տեղի ունենում Բեռլինում՝ երկու երկրների դեսպանների մասնակցությամբ: Լաշեթի մեկնությամբ, գործընթացը մեծ նշանակություն ունի ոչ միայն Ադրբեջանի եւ Հայաստանի, այլեւ Գերմանիայի համար, քանի որ տրանսպորտային եւ երկաթուղային նոր կապեր են ստեղծվում դեպի Կենտրոնական Ասիա, ինչը կարեւոր է նաեւ Եվրոպայի համար:

Լաշեթը նաեւ հիշեցրել է, որ 2025-ին ուղեկցել է ԳԴՀ նախագահ **Ֆրանկ Վալտեր Շթայնմայերին** Հայաստան եւ Ադրբեջան կատարած առաջին պաշտոնական այցի ժամանակ, հատկապես ընդգծել Ադրբեջանի հարուստ ավանդույթները՝ հանդուրժողականությունը եւ բոլոր կրոնների ներկայացուցիչների խաղաղ համակեցությունը: «**Ազգն**» իհարկե 11.04.2025-ին անդրադարձել է Լաշեթի՝ Բաքվում «հանդուրժողականության» մասին հայտարարություններին, բայց Բեռլինում գերմանական համալսարանների կազմակերպած քննարկմանն ինչպե՞ս է համարձակվել նույնը կրկնել, երբ կողքին նստած է եղել ոչ միայն Նասիմի Աղաեւը, այլեւ Վիկտոր Ենգիբարյանը, դժվար է պատկերացնել:

⇨5

# Իրանի շուրջ լարվածություն

⇨1 Նա ընդգծել է, որ տարածաշրջանի երկրները լավ գիտակցում են՝ անկայունությունը վարակիչ է եւ չի սահմանափակվի միայն Իրանով:

Իրանի ԱԳՆ խոսնակը տարածաշրջանի երկրներին կոչ է արել Վաշինգտոնի սպառնալիքների դեմ որդեգրել հստակ դիրքորոշում՝ նշելով, որ հարեւանների շրջանում ձեւավորվել է ընդհանուր մտահոգություն: Նրա խոսքով՝ խաղաղությանը եւ միջազգային իրավունքին հավատարիմ յուրաքանչյուր պետություն պարտավոր է հստակ կեցվածք ընդունել ԱՄՆ-ի սպառնալիքների դեմ:

## Իսկ ո՞ր երկրներն են հստակ կեցվածք ընդունել

Թուրքիայի արտաքին գործերի նախարար **Հաքան Ֆիդանը**, պատասխանելով Իրանի նկատմամբ ԱՄՆ-ի հնարավոր ռազմական հարձակման հավանականության մասին հարցին՝ ասել է. «Իմ ամերիկացի ընկերներին խորհուրդ եմ տալիս՝ թույլ մի տվեք, որ այս հարցը վերածվի եւս մեկ Վենեսուելայի»:

Ֆիդանը նշել է, որ Իրանը պատրաստ է բանակցությունների, սակայն անհրաժեշտ է գտնել բանակցելու ճիշտ ուղի՝ այնպես, որ իրանցիները չկորցնեն իրենց հեղինակությունը: Նա զգուշացրել է, որ եթե Իրանը իրեն ճնշման տակ զգա, կարող է պատրաստվել ամենավատ սցենարին:

Տարածաշրջանում ռազմական գործողությունների հնարավոր հետեւանքներից մտահոգ Իրաքի արտաքին գործերի նախարար **Ֆուադ Հուսեյնը** հայտարարել է, որ Բաղդադը Իրանին նախազգուշացրել է ԱՄՆ-ի հնարավոր արձագանքի մասին՝ Բաղդադում ԱՄՆ դեսպանատան վրա հարձակման դեպքում:

Նրա խոսքով՝ Իրաքը Իրանին կոչ է արել միջամտել՝ կանխելու համար Բաղդադի «Կանաչ գոտու» թիրախավորումը՝ զգուշացնելով, որ նման հարձակման դեպքում Վաշինգտոնը կարող է լուրջ քայլեր ձեռնարկել Թեհրանի դեմ:

Ռուսաստանը՝ որպես միջազգային քաղաքականության վրա ազդեցություն ունեցող պետություն, նույնպես մտահոգություն է հայտնում Իրանի շուրջ զարգացումների կապակցությամբ: Ռուսաստանի արտաքին գործերի նախարար **Սերգեյ Լավրովը** հայտարարել է, որ Մոսկվան անհանգստացած է Իրանում իրավիճակն ապակայունացնելու ուղղությամբ ձեռնարկվող փորձերով:



Չինաստանի արտաքին գործերի նախարարության խոսնակը, արձագանքելով Թրամփի հայտարարություններին, իր վերջին ճեպազրույցում նշել է, որ Պեկինը հույս ունի՝ Իրանը կպահպանի ազգային կայունությունը եւ բոլոր կողմերին կոչ է անում գնահատել խաղաղության գինը: Նրա խոսքով՝ կողմերը պետք է զսպվածություն ցուցաբերեն եւ տարաձայնությունները լուծեն երկխոսության միջոցով:

Ֆրանսիայի զինված ուժերի հարցերով նախարար-խորհրդական **Ալիս Ռուֆոն** հայտարարել է, որ Իրանի դեմ ռազմական միջամտությունը Փարիզի համար նախընտրելի տարբերակ չէ՝ ընդգծելով, որ «իրանական ժողովրդին աջակցելը» պետք է իրականացվի այլ ուղիներով: Նրա խոսքով՝ իրանական ժողովուրդն ինքն է պետք որոշի իր ապագան, իսկ Ֆրանսիան ներկայումս կանգնած է ժողովրդի կողքին, ոչ թե ռազմական միջամտության ճանապարհով:

Տաջիկստանի արտաքին գործերի նախարարությունը հայտարարություն է տարածել՝ արտահայտելով «խոր մտահոգություն» Մերձավոր Արեւելքում լարվածության աճման կապակցությամբ, հատկապես՝ Իրանի Իսլամական Հանրապետության շուրջ զարգացումների առնչությամբ: Հայտարարության մեջ ընդգծվում է, որ Տաջիկստանը դեմ է ռազմական գործողություններին եւ աջակցում է բոլոր հակամարտությունների խաղաղ կարգավորմանը՝ դիվանագիտական ճանապարհներով:

Իրանում վերջին բողոքի ցույցերից ի վեր Տաջիկստանի որեւէ պետական մարմին կամ պաշտոնատար անձ այդ բողոքների ու դրանց հետեւանքների մասին որեւէ մեկնաբանություն չէր արել:

Իսկ Ադրբեջանը Իրանի շուրջ զարգացումների ֆոնին իր դիրքորոշումն արտահայտել է՝ Բաքվում ընդունելով Իսրայելի բարձրաստիճան պաշտոնյայի: Իսրայելի արտաքին գործերի նախարար **Գիդեոն Սաարը** հունվարի 26-ին իր ադրբեջանցի պաշտոնակցի հետ Բաքվում հանդիպման ընթացքում, հավանաբար նաեւ նրա լուռ համաձայնությամբ, հայտարարել է, որ Իրանում իրավիճակը հասել է «անհավանական մաշտաբների» եւ կոչ է արել միջազգային հանրությանը ուշադրություն դարձնել այնտեղ ստեղծված իրավիճակին:

Սակայն Հայաստանն իր աշխարհագրական դիրքով, լինելով Իրանի անմիջական հարեւանն ու տարածաշրջանի ամենախոցելի երկրներից մեկը, հնարավոր փախստականների հոսքի եւ անվտանգության ռիսկերի ֆոնին ձեռնարկված քայլերի մասին դեռեւս հանրությանը ոչինչ չի տեղեկացրել:

# Ինչո՞ւ է Միացյալ Նահանգներն այդքան շահագրգռված այսպես կոչված «Զանգեզուրի միջանցքի» վերահսկմամբ

*Չինաստանյան հայացք «Ինֆոբրիքս» կայքում*

Վերնագրում նշված հարցադրմամբ ամսույս 28-ին ծավալուն վերլուծական հոդված է հրապարակվել ԲՐԻՔՍ-ի անդամ երկրների ԱԳ նախարարությունների «Ինֆոբրիքս» համատեղ կայքի չինաստանյան տարբերակում (infoBRICS Китай): Մենք վերնագրում միայն չակերտներն ավելացրինք:

Վաշինգտոնը շտապում է իրականացնել «Թրամփի ուղի՝ միջազգային խաղաղության եւ բարգավաճման համար» ծրագիրը՝ ընդամենը 32 կիլոմետր երկարությամբ փոքրիկ միջանցքը: Արձանագրելով սա, հոդվածագիրն ի դեպ նկատում է, թե «Հաշվի առնելով, որ Թրամփը շարունակում է ԱՄՆ-ի նախորդ, ենթադրյալ «թշնամական» վարչակազմի գործողությունները, կարելի է փաստել, որ Վաշինգտոնի արտաքին քաղաքականությունը մշտական եւ համակարգային է՝ անկախ նրանից, թե ով է իշխանության գլուխ»:

Իբրեւ ԹՐԻՓՓ-ի (TRIPP) նպատակ հայտարարելով Հարավային Կովկասում երկարատեւ խաղաղության եւ բարգավաճման գործի առաջմղումը, իրականում ԱՄՆ-ն, ըստ հոդվածագրի ձեւակերպման, «իր ուղղակի վերահսկողության ներքո է առնում այսպես կոչված Զանգեզուրի միջանցքը՝ Թուրքիայի եւ Ադրբեջանի համատեղ նախագիծը»:

Հրապարակման մեջ անդրադարձ է կատարվում, մասնավորապես, հայկական կողմի այն պնդմանը, թե Ադրբեջանի հիմնական մասը կապելով Նախիջեւանի Ինքնավար Հանրապետության հետ եւ ստեղծելով Տրանսկասպյան առեւտրային ուղու մի կենսականորեն կարեւոր օղակ, TRIPP-ը, ինչպես ակնկալվում է, փոխադարձ օգուտներ կբերի Հայաստանի Հանրապետության միջազգային եւ ներքին տրանսպորտային կապին: Եվ հարց է տրվում. «Ինչպե՞ս է իր ինքնիշխանության մի մասը Անկարայի եւ Բաքվի իր հին թշնամիներին զիջելը օգնելու Հայաստանին»:




Հարավային Կովկասի նկատմամբ Վաշինգտոնի «հանկարծակի» հետաքրքրությունը հասկանալու համար կարեւոր են նկատվում Հայաստանի արտաքին գործերի նախարարության տարածած հայտարարության այն տողերը, թե ԹՐԻՓՓ ծրագրի նպատակներից է նաեւ ամերիկյան առեւտրի խթանումը՝ ընդլայնելով տարածաշրջանային առեւտուրն ու տրանսպորտային հասանելիությունը «եւ ստեղծելով Կենտրոնական Ասիան ու Կասպից ծովը Եվրոպայի հետ կապող նոր տարանցիկ հնարավորություններ»:

Այս տարածաշրջանը, այո, միշտ էլ ռազմավարական նշանակություն է ունեցել՝ թե՛ հին ժամանակներում, թե՛ միջնադարում, թե՛ այսօր: Պատմական եւ ժամանակակից յուրաքանչյուր գերտերություն, ինչպես նշվում է, ձգտել է վերահսկել այս անկայուն տարածաշրջանը, քանի որ այն աննախադեպ հնարավորություններ է ընձեռում ուժի ցուցադրման համար: Այն կապում է Արեւելյան Եվրոպան, Կենտրոնական Ասիան եւ Մերձավոր Արեւելքը՝ տարածքը վերահսկողներին թույլ տալով թելադրել, թե ինչպես իրականացվեն (կամ չիրականացվեն) էներգետիկ եւ տրանսպորտային նախագծերը: Խորհրդային Միության փլուզումից ի վեր տարածաշրջանային եւ համաշխարհային շատ տերություններ են ձգտել ամրանալ Հարավային Կովկասում: Նրանք հատուկ ուշադրություն են դարձրել Ադրբեջանին՝ նավթով հարուստ եւ դեպի Կասպից ծով դարպաս հանդիսացող երկրին:

Ամերիկայի, նրա դաշնակիցների, վասալների եւ արբանյակների համար այս տարածաշրջանում հիմնական նպատակը, հոդվածի հեղինակի գնահատմամբ, Մոսկվայի շարունակական ապակայունացումն է: Սա հատկապես վերաբերում է Հյուսիսային Կովկասին, որը բարդ եւ պոտենցիալ անկայուն տարածաշրջան է՝ ամբողջությամբ Ռուսաստանի տարածքում գտնվող: Արեւմուտքը, ԱՄՆ-ի գլխավորությամբ, ձգտում է օգտագործել այս իրավիճակը՝ տարածաշրջանում «ազատություն եւ ժողովրդավարություն տարածելու» համար: Այդ նպատակով այն աջակցում է ինչպես իսլամական արմատականությանը, այնպես էլ էթնիկ ազգայնականությանը, նաեւ ծայրահեղական նոր-ազատական քաղաքականությանը:

Ներկայումս Հայաստանը գրեթե բոլոր կողմերից շրջապատված է թշնամիներով, ասվում է հրապարակման մեջ: «Սորոսի կողմնակիցների աջակցությամբ» վարչակազմը խզում է կապերը թե՛ Ռուսաստանի, թե՛ Իրանի՝ տարածաշրջանի այն երկու եզակի երկրների հետ, որոնք շահագրգռված են Հայաստանի պահպանմամբ: Սակայն **Փաշինյանն** այլ ծրագրեր ունի: Նա ակտիվորեն փորձում է գոհացնել ոչ միայն Թուրքիային ու Ադրբեջանին, այլեւ քաղաքական Արեւմուտքին, որը, կարծես, բացարձակապես անտարբեր է, թե ինչ է կատարվում Հայաստանի հետ: Թուրքիան եւ Ադրբեջանն այժմ օգտագործում են Երեւանը (իսկ հատկապես՝ Սյունիքի մարզը) որպես կամուրջ: Այս երկու թյուրքական երկրների համար «Զանգեզուրի միջանցքի» վերահսկողությունը նշանակում է, որ նրանք վերջապես կկարողանան ցամաքային կամուրջ ստեղծել իրենց պատմական տարածքների՝ նախկին խորհրդային Կենտրոնական Ասիայի հետ: Իսկ դա, սնելով, նաեւ, Արեւմուտքի կողմից պաշտպանվող Թուրքիայի՝ տարածաշրջանում ԱՄՆ-ի եւ ՆԱՏՕ-ի «տրոյական ձիու» ագրեսիվ պլանները, համարվում է, որ երկարատեւ հեռանկարում անխուսափելի է դարձնում վերջինիս ռազմավարական բախումները Ռուսաստանի, Իրանի եւ Չինաստանի հետ: Ինչը սակայն կարող է ավելի լուրջ հետեւանքների հանգեցնել:

Նաեւ Ռուսաստանը թուլացնելու Արեւմուտքի ձգտումից բացի, ինչպես նշվում է, իր նկրտումներն ունի Ադրբեջանը եւս՝ կապված Իրանի հյուսիս-արեւմտյան տարածքի հետ, սակայն դրանք զսպելի են: Իսկ Մոսկվան ու Թեհրանը շատ սերտ կապեր եւ փոխադարձ շահագրգռվածություն ունեն Հարավային Կովկասում ՆԱՏՕ-ի ծավալապաշտությունը կանխելու հարցում: Ըստ հրապարակման, հենց սա է պատճառը, որ ԱՄՆ-ն այդքան համառորեն փորձում է ներխուժել տարածաշրջան:

Գ. Ս.

# Մի օր ընտրողին մարդ կհամարեն՝ հաջորդ հինգ տարին մոռանալու համար

⇨1

Այսօր մենք կփորձենք նկարագրել ընտրողների շերտերը, որոնք այս կամ այն կուսակցության կողմնակիցը չեն, արտահայտված համակրանքներ ու հակակրանքներ չունեն (կամ՝ համարյա թե չունեն), բայց ըստ Սահմանադրության նրա՛նք են Հայաստանում իշխանություն ձեւավորում ընտրությունների օրը, նրա՛նց քվեն են մուրում ապահով-հարուստ-հաջողակ, ոչ մի մեկի կարիքը չունեցող մեր քաղաքականները այդ մեն-մի օրը: Շերտավորենք մեր ընտրողներին, գումարում-հանումը թողնելով ընթերցողին:

-Սկսենք արցախցիներից, որոնց Արարատ Միրզոյանն ԵԽԽՎ իր ելույթում իսկի մարդ չհամարեց: Նրանց կեսի՝վաթսուն-յոթանասուն հազար ընտրական տարիքի արցախցու քվեն կկիսվի հավանաբար: Ովքեր իշխանության հասցեական օգնությունից բավարար օգտվել են՝ անխոս կընտրեն իշխանական կուսակցություններին, սակայն նրանց կայուն ու ստվար մի զանգված, անշուշտ, կընտրի քոչարյանական կամ սերժսարգսյանական դաշինքներին, Սամվել Կարապետյանի ձեւավորած բլոկին եւս զգալի թվով արցախցիներ կաջակցեն:

-Պետական ապարատում զբաղված աշխատողների թիվը Հայաստանում բավական ներշնչող է՝ երկու հարյուր հազարից ավելի մարդ, եթե այդ թիվը կրկնապատկենք՝ ամեն աշխատողին ընտանիքի մեկ անդամի քվե եւս հաշվարկով, ապա այդ թվի զգալի մասը, մանավանդ նոր իշխանության օրոք չաղլիկ պարգեւավճարների առկայությամբ, անշուշտ ընտրելու է իրեն կերակրող ձեռքին՝ իշխանությանը: Իհարկե, այդ թվի մեջ կլինեն ներքին թաքուն համակրողներ, սակայն հազիվ թե նրանք շատ մեծ թիվ կազմեն ընտրելիս, իրար կասկածելու ներկա մթնոլորտում:

-Զինծառայողների թիվը կարելի է գլխի ընկնել, թեեւ դա պետական գաղտնիք է, եւ մտովի նրանց եւս ավելացնել իշխանականների ակտիվներին, քանի որ վերջին շրջանում մի շարք օրենքներ ուղղված էին զինվորականության սոցիալական կարիքներին, բանակում ծառայության ժամկետի կրճատմանը, աշխատավարձերի բարձրացմանը, այնպես որ հազիվ թե զինվորականության քվեի մեծ տոկոս գնա ընդդիմությանը, իշխանությունը վաղուց է թիրախային աշխատել այս դաշտում:

-Թոշակառուները՝ ամենաստվար այս ընտրազանգվածը թիրախ են թե՛ ընդդիմության, թե՛ իշխանության համար, նրանք հենց ամենաանկանխատեսելին են: Ամենաանապահով այս ընտրողները, որոնք կես միլիոնից ավելի են, միշտ կարող են դառնալ իշխանության կամ ընդդիմության շահառուները՝ նայած, թե ումից՝ ինչ սպասելիք ունեն կամ կունենան: Նրանց մի մասն, այնուամենայնիվ, համարելու է, որ այս իշխանության օրոք, թեկուզ աննշան, իր թոշակը մի փոքր ավելացել է, իսկ մյուսները նայելու են ֆինանսական միջոցներ շաղ տվողների ուղղությամբ: Այնպես որ թոշակառուների ավելի ու ավելի մեծ շերտեր որսալու մրցավազքը դեռ նոր է սկսվելու, իշխանությունը միգուցե նոր կիսաորոշումներով, ընդդիմությունը՝ խոստումներով, եւ ոչ միայն փորձելու են խաբշտել թվով ամենամեծ ընտրողների այս շերտին: Հերթական անգամ: Իսկ թոշակառուներն, անշուշտ, նրանց թիվը եթե նկատի առնենք, իրոք կարող են թե՛ իշխանություն փոխել, թե՛ իշխանությունը նույնը թողնել:

-Թոշակառուներից ավելի խնդրահարույց են գյուղական, համայնքային ընտրողները, որոնք, ինչպես եւ առաջներում, ամենաշատն են ենթակա անարդարություններին, դժվար ապրուստ ունեն, ենթակա են մարդու իրավունքների ամեն տեսակի ոտնահարումների: Այ նրանք, որոնք Հայաստանի բնակչության կեսն են, կարող են շատ բան վճռել, ու չնայած ներկա իշխանություններից եւս առանձնապես ուշադրության չեն արժանացել, նրանցից շատերը շարունակում են վախենալ նախկինների վերադարձից:

-Եվ վերջապես՝ Հայ Առաքելական Եկեղեցուն պաշտպանող լայն շերտերն ու աղանդավորները, վերջիններս էլ Հայաստանում բավական մեծ թիվ են կազմում: Ինքներդ էլ գիտեք՝ ում քվե կտան առաջինները, եւ ում՝ երկրորդները:

Հիմա այս բոլոր շերտերը մի անգամ էլ դիտարկեք ռուսամետության եւ արեւմտամետության բացվածքով, քանի որ մեր քաղաքական ուժերն են այդ տարբերակիչի տակ (որքան էլ ծիծաղելի կամ ողբալի համարենք սա), ու այս բացվածքով վերատեսության ենթարկեք ձեր սզբնական հաշվարկները:

Սոցիոլոգիական հարցում էիք ուզո՞ւմ՝ ստացեք, գումարեք-հանեք՝ անկախ ընդդիմության բլոկների, անկախ տեխնոլոգիաներ կիրառելու մեջ հմուտ իշխանության կեղծ թվերից: Ո՞վ է հիմա հավատում սոցհարցումներին, դրանք միշտ եւ հիմա ներկայացնում են պատկեր ըստ պատվիրողի ցանկությունների:

Թե չէ ո՞վ չգիտե, թե ի՞նչ տեսակ արտառոց դաշինք կամ լարախաղ այս ընտրություններից առաջ տեսնելու ենք՝ Սամվել Կարապետյանի հետ համագործակցության պատրաստ վարչապետի թեկնածու **Լեւոն Զուրաբյանը** վկա, այլ վարչապետացուների զարմանահրաշ անունների հրապարակմանն էլ սպասեք փետրվարի առաջին կեսի ողջ ընթացքում: Իսկ իշխանությունն էլ ԱՄՆ փոխնախագահի **Ջեյ Դի Վենսին**, եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովի ողջ կազմին է տղա բերելու, ԹՐԻՓՓ-մրիփ. մոդուլային ատոմակայանի, նոր միջուկային ռեակտորի կառուցման ծրագիր...

Եվ այսպես, ինչպես կինոյում, ապրելու ենք հինգ ամիս՝ մինչեւ ընտրություններ, բարի վայելո՜ւմ, որից հետո մի օր ընտրողին մարդ կհամարեն՝ հաջորդ հինգ տարին նրան մոռանալու համար...

ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

# Մելինե Մեսրոպյան. **Հայկական հետքեր ճապոնական արխիվներում եւ նոր բացահայտումներ Դիանա Աբգարի մասին**

***ԵՐԵՎԱՆ-ԿՈԲԵ, Ճապոնիա*** *- Երեւանում ծնված* ***Մելինե Մեսրոպյանը*** *ճապոներեն է սովորել Երեւանի հումանիտար ինստիտուտում, այնուհետեւ մի քանի տարի աշխատել է զբոսաշրջային գործակալությունում: 2011-ից բնակվում է Ճապոնիայում: 2025-ին ճապոներեն լույս է տեսել նրա համահեղինակած* ***«Ճապոնիայում ապրած «սփյուռքը». Դիանա Աբգարը եւ Հայոց ցեղասպանությունը»*** *աշխատությունը՝ նվիրված գործարար, գրող, մարդասիրական գործիչ եւ Ճապոնիայում Հայաստանի պատվավոր հյուպատոս* ***Դիանա Աբգարի*** *(1859-1937) կյանքին ու գործունեությանը:*

**-Սիրելի՛ Մելինե, ինչպե՞ս հայտնվեցիր Ճապոնիայում:**

-Ես ճապոներեն սկսեցի սովորել Երեւանի հումանիտար ինստիտուտում եւ շատ շուտով սիրահարվեցի այդ լեզվին: Դժվար լեզու է, բայց միաժամանակ հմայիչ՝ լի մշակութային շերտերով: Ճապոներեն սովորող շատ ուսանողների նման ես էլ սկսեցի երազել, որ մի օր կապրեմ Ճապոնիայում: 2010-ին հանձնեցի ընդունելության քննությունները եւ Ճապոնիայի Կրթության, մշակույթի, սպորտի, գիտության եւ տեխնոլոգիաների նախարարությունից ստացա կրթաթոշակ՝ ճապոնական համալսարանում ուսումս շարունակելու համար:

Երբ ինձ հարցնում են, թե ինչպես հայտնվեցի Ճապոնիայում, միշտ հիշում եմ Երեւանի մեր տան մոտ գտնվող սուպերմարկետի տարադրամի փոխանակման կետը: Հինգ ամիս շարունակ, ամեն օր, փոխանակում էի տասը ամերիկյան դոլարի համարժեք գումար՝ դանդաղ կուտակելով այն գումարը, որն անհրաժեշտ էր Ճապոնիայում իմ առաջին ամսվա ապրուստի համար. այդ գումարը վեց անգամ գերազանցում էր մեր ընտանիքի ամսական եկամուտը: Մեկ տարի անց, երբ կարճ ժամանակով վերադարձա Երեւան, կրկին գնացի նույն փոխանակման կետը՝ այս անգամ դոլարները դրամի փոխանակելու: Կարծում էի՝ ինձ չեն հիշի, բայց ինձ դիմավորեցին ջերմ ժպիտով եւ կատակով հարցրին, թե ուր էի «անհետացել»: Նրանք ինձ նույնիսկ տեսել էին հեռուստատեսությամբ՝ Հայաստանի այն ժամանակվա նախագահի՝ Ճապոնիա այցի ընթացքում որպես թարգմանիչ: Այս առիթն օգտագործելով՝ ուզում եմ իրենց ողջունել:

2011-ի հոկտեմբերին որպես հետազոտող տեղափոխվեցի Ճապոնիա՝ հաստատվելով Սենդայում, որտեղ գտնվում է Տոհոկու համալսարանը: Այդ տարին նաեւ նշանավորվեց ավերիչ երկրաշարժով եւ ցունամիով: Իրականում ես Երեւանից պետք է ավելի վաղ մեկնեի, բայց մարտի 11-ին միացրի հեռուստացույցը եւ տեսա, թե ինչպես է Սենդայը ջրի տակ անցել: Ցնցված էի: Անմիջապես գրեցի Տոկիոյում գտնվող ընկերոջս, եւ նա պատասխանեց կես կատակ, կես լուրջ. «Այս պահին մենք ցնցվում ենք»: Ծնողներս, հասկանալիորեն, շատ էին անհանգստանում, հատկապես Ֆուկուշիմայի ատոմակայանի վնասման պատճառով: Բայց ես չհրաժարվեցի իմ ծրագրերից: Հոկտեմբերին արդեն Ճապոնիայում էի, եւ դրանից հետո ամիսներ շարունակ հետցնցումները դարձան առօրյա կյանքի մաս:

2013 թվականին ընդունվեցի Տոհոկու համալսարանի մագիստրատուրա, ապա շարունակեցի դոկտորական ուսումնառությունս, որի շրջանակում պաշտպանեցի ատենախոսություն Դիանա Աբգարի մասին: Այսօր Կոբեի եւ Օսակայի համալսարաններում դասավանդում եմ «Գլոբալ Եվրոպա», «Ճապոնական մշակույթ եւ հասարակություն» առարկաները, ինչպես նաեւ անգլերեն եւ ռուսերեն: 2025-ին հնարավորություն ունեցա նաեւ մեկ ուսումնական տարի դասավանդել հայերեն՝ Կոբեի օտար լեզուների համալսարանում: Ունեի յոթ ուսանող, եւ նրանց ոգեւորությունն իսկապես հուզիչ էր: Տարվա վերջում նույնիսկ կազմակերպեցինք հավաքույթ հայկական ուտեստներով՝ միասին պատրաստելով հարիսա եւ տոլմա, իսկ որպես աղանդեր վայելեցինք գաթա: Ցավոք, դասընթացը չշարունակվեց դասաժամերի կրճատման պատճառով, բայց ուսանողները գրեթե մեկ տարի շարունակ ինձ գրում էին հայերենի քերականության հարցերով: Հուսով եմ, որ ապագայում կրկին կկարողանամ վերակենդանացնել այդ դասընթացները:



**-Շնորհավորում եմ քո ճապոներեն աշխատության հրատարակության առթիվ, որը վերաբերում է մեր պատմության ամենահետաքրքիր տիկնանցից մեկին՝ Դիանա Աբգարին: Սկսած 2004 թվականից ես պարբերաբար գրել եմ նրա մասին՝ պեղելով ժամանակի հայ մամուլը, ուսումնասիրելով արխիվային նյութեր, սակայն անհրաժեշտություն կար ոչ թե կրկնելու բազմիցս ասվածը, այլ մասնավորապես ընդգրկելու ճապոնական աղբյուրների տեղեկությունները: Դա կարող էր անել ճապոներենին տիրապետող հետազոտողը, ինչը դու կատարեցիր անցած 13 տարիների ընթացքում: Ի՞նչ ճանապարհ անցավ աշխատությունդ եւ ո՞ւր հասավ:**

-Շնորհակալություն: Երբ Ճապոնիա ժամանեցի, ծրագրում էի մասնագիտանալ ճապոնական հոգելեզվաբանության մեջ: Սակայն դա փոխվեց Տոկիոյում մի դիվանագետ ընկերոջ հետ ունեցած զրույցից հետո: Նա առաջարկեց, որ քանի որ արդեն խոսում եմ ճապոներեն, գուցե արժի ընտրել հայ-ճապոնական կապերին առնչվող որեւիցե թեմա: Այդ պահին հիշեցի մի լուսանկար, որը ժամանակին տեսել էի Տոկիոյում Հայաստանի դեսպանատանը. Դիանայի պատկերն էր: Նրա անունը գիտեի դպրոցից, սակայն հանկարծ հասկացա, թե որքա՜ն քիչ գիտեմ նրա կյանքի մասին: Այդ պահը դարձավ իմ հետազոտական ճանապարհի իրական սկիզբը:

Նույն երեկոյան հյուրանոց վերադառնալով՝ սկսեցի որոնել նրա անունը: Հանդիպածս առաջին գրությունը ճապոնացի հետազոտող **Հիդեհարու Նակաջիմայինն** էր, որը հայտնաբերել էր Դիանա Աբգարի գերեզմանը Յոկոհամայում: Գրեթե միաժամանակ ընտանիքս Երեւանից տեղեկացրեց, որ հենց նոր լույս է տեսել Աբգարին նվիրված մի փոքր խմբագրած գրքույկ, որի մեջ ընդգրկված էր նաեւ ձեր հոդվածը, Արծվի՛: Այդ վաղ փուլում սա չափազանց կարեւոր էր՝ ոչ միայն որպես աղբյուր, այլեւ որպես հաստատում, որ նրա կյանքը կարող է եւ պետք է լրջորեն ուսումնասիրվի: Ձեր աշխատանքը դարձավ այն հիմքերից մեկը, որի վրա սկսեցի կառուցել իմ հետազոտությունը:

Խորանալով թեմայի մեջ՝ զարմանքով նկատեցի, թե որքա՜ն սահմանափակ ու հատվածական է առկա գիտական գրականությունը, հատկապես ճապոնական եւ միջազգային համատեքստում: Շատ քիչ ուշադրություն էր դարձվել նրա կոնկրետ գործողություններին, ճապոնական իշխանությունների հետ փոխհարաբերություններին կամ նրա մարդասիրական գործունեության գործնական մեխանիզմներին: Սկզբից իսկ իմ նպատակը Դիանա Աբգարին որպես հերոսական կերպար ներկայացնելը չէր, այլ նրան հասկանալը որպես պատմական գործիչ, որը գործում էր հստակ քաղաքական, ինստիտուցիոնալ եւ սոցիալական սահմանափակումների պայմաններում:

Իմ հետազոտությունը ստացավ ընդգծված արխիվային եւ անդրազգային բնույթ: Ճապոնական պաշտոնական փաստաթղթերի, մամուլի եւ վարչական նյութերի հետ մեկտեղ ուսումնասիրեցի եվրոպական եւ ամերիկյան արխիվներում պահպանվող նամակագրությունը: Թեպետ Աբգարն ապրել է Ճապոնիայում, նրա մտավոր եւ մարդասիրական գործունեությունը ներառված էր լայն միջազգային ցանցի մեջ, եւ նրա բազմաթիվ նամակներ պահպանվել են Ճապոնիայից դուրս՝ տարբեր նշանավոր գործիչների անձնական արխիվներում:

Այս աշխատանքը բարդանում էր նրանով, որ նրա անձնական փաստաթղթերի մեծ մասը (նաեւ այլ նյութեր՝ կապված փախստականների հետ) ոչնչացվել էր 1923 թվականի Մեծ Կանտոյի երկրաշարժի ժամանակ, իսկ ավելի ուշ՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: Նրա կյանքը վերակառուցելու համար աշխատեցի՝ քննելով ճապոներեն, անգլերեն, հայերեն, ռուսերեն եւ ֆրանսերեն նյութեր՝ խնամքով համադրելով աղբյուրները եւ արխիվային բեկորները: Աշխատեցի նաև Սենդայի, Յոկոհամայի, Տոկիոյի, Կոբեի, Հիրոշիմայի, Ցուրուգայի եւ այլ քաղաքների արխիվներում:

Ժամանակի ընթացքում այս մոտեցմամբ կատարվեցին մի շարք կարեւոր բացահայտումներ եւ, ամենակարեւորը, ձեւավորվեց ամուր փաստագրական հիմք, որը թույլ է տալիս Դիանա Աբգարին տեսնել որպես իր ժամանակի քաղաքական եւ մարդասիրական ճգնաժամերին արձագանքող գործիչ:

2021-ին Սենդայից Կոբե տեղափոխվելուց հետո իմ հետազոտությունը ստացավ նաեւ մի նոր անմիջականություն: Ապրելը մի քաղաքում, որտեղ Աբգարի կյանքի մի հատվածն էր անցել, անցյալը դարձրեց ավելի շոշափելի, հատկապես այն թաղամասերով քայլելիս, որտեղ ժամանակին եղել են նրա ընտանիքի հյուրանոցն ու գործարարական գրասենյակը:

Այս հետազոտությունը բնականորեն բերեց նաեւ իմ այժմյան աշխատանքի՝ 1915-1930 թվականներին Ճապոնիայով անցած հայ փախստականների պատմության ուսումնասիրությանը: Թեեւ սա հետազոտության նոր փուլ է, այն անմիջականորեն բխում է Դիանա Աբգարի ուսումնասիրության ընթացքում առաջացած հարցերից: Վստահ եմ, որ բազմաթիվ կարեւոր փաստաթղթեր դեռեւս հայտնաբերված չեն, եւ ես շարունակում եմ դրանց որոնումը՝ հանձնառու լինելով լույս սփռել այս անտեսված պատմությունների վրա:

**-Աշխատությունդ հրատարակել ես Արիսա Օտայի համահեղինակությամբ: Խնդրեմ ներկայացրո՛ւ համահեղինակիդ եւ քեզ օժանդակած այլ անձնավորությունների:**

- Գիրքը լույս է տեսել լրագրող **Արիսա Օտայի** հետ համատեղ աշխատանքի արդյունքում: Հրատարակիչ **Յոշիո Ֆուջիվարան** ինձ առաջարկեց ստեղծել համահեղինակությամբ գրված մի գիրք, որի նպատակը Դիանա Աբգարի կյանքը ներկայացնելն էր պարզ, մատչելի ճապոներենով՝ միաժամանակ այն հիմնովին տեղադրելով Ճապոնիայի պատմա-հասարակական համատեքստում: Այս մոտեցումը կարեւոր էր՝ Ճապոնիայում նրա գործունեության նշանակությունը լիարժեք փոխանցելու համար:

Արիսա Օտան երկար տարիներ աշխատել է Ճապոնիայի անգլիալեզու մամուլում, այժմ ներգրավված է փախստականներին աջակցող ճապոնական հասարակական կազմակերպությունների գործունեության մեջ: Ժամանակակից ճապոնական պատմության, մամուլի եւ քաղաքացիական հասարակության մասին խոր գիտելիքը, ինչպես նաեւ լրագրողական փորձը վճռորոշ դեր ունեցան մեր աշխատության ձեւավորման գործում: Նրա ներդրումը շատ ավելին էր, քան լեզվական հղկումը: Գրելու ողջ ընթացքում նա հետեւողականորեն քննադատական, սուր եւ մտածված հարցերով փորձության էր ենթարկում իմ մեկնաբանությունները՝ ապահովելով պատմական ճշգրտություն, հավասարակշռություն եւ հասկանալի ներկայացում ճապոնացի ընթերցողի համար: Գիտական հետազոտության եւ լրագրողական գործելակերպի այս երկխոսության շնորհիվ գիրքը դարձավ առավել հստակ ու մատչելի:

Համագործակցության ընթացքում Արիսան իրականացրեց նաեւ սեփական հետաքննությունները, որոնք հանգեցրին մի շարք կարեւոր բացահայտումների, այդ թվում՝ Յոկոհամայում Դիանայի երեխաներից մեկի մինչ այդ անհայտ գերեզմանի հայտնաբերմանը եւ մի փաստաթղթի բացահայտմանը, որը պարզաբանում է Դիանայի սերտ հարաբերությունները մի օտարազգի բնակչուհու հետ, որը ներգրավված էր հայ փախստականների համար դրամահավաք կազմակերպելու գործում: Այս բացահայտումները լրացրեցին պատմական համայնապատկերի այն հատվածները, որոնք երկար ժամանակ մնացել էին դրվագային:

⇨5

⇨4 Գիրքը կազմավորվել է բազմաթիվ մարդկանց ներգրավմամբ, որոնք տարբեր փուլերում աջակցել են հետազոտությանը: Վաղ շրջանում հանդիպեցի երջանկահիշատակ Հիդեհարու Նակաջիմային, որն ինձ տրամադրեց իր նյութերն ու ինձ հայտնեց իր դիտարկումները: Միասին այցելեցինք Յոկոհամա՝ Աբգարի շիրիմին, որը երկար ժամանակ նրա հոգածության տակ էր:

Պրոֆեսոր Շինջի Շիգեմացուի ուսումնասիրությունները «Աբգար եւ ընկ.» միության եւ հյուրանոցային բիզնեսի մասին վերաբերում են Յոկոհամայում հայկական առեւտրական ներկայությանը: Իմ՝ Կոբե տեղափոխվելուց հետո Շիգեմացուն ու նրա գործընկեր Ռյոհեյ Տանիգուչին խրախուսեցին ինձ այցելել Կոբեի օտարերկրացիների գերեզմանատուն: Այդ այցի ընթացքում հայտնաբերեցի Դիանայի դուստր Ռուզի սկեսրայր Մարտին Խաչատուր Գալստոնի գերեզմանը:

**Հրանտ Պողոսյանը՝** Ճապոնիայում Հայաստանի առաջին դեսպանը, աջակցել է իմ հետազոտությանը դրա վաղ փուլերից սկսած եւ շարունակել նաեւ իմ դոկտորական ատենախոսության ավարտից հետո՝ ներառյալ հրատարակչի որոնման գործընթացում: Նախկին դեսպան **Արեգ Հովհաննիսյանը** եւ ներկա դեսպան **Մոնիկա Սիմոնյանը** շարունակաբար աջակցել են այս նախաձեռնությանը Ճապոնիայում Հայաստանի դեսպանության միջոցով:

Դիանայի ծոռնուհին՝ **Միմի Մալայանը** Սան Ֆրանցիսկոյից, արդեն ավելի քան մեկ տասնամյակ առնչվում է իմ հետազոտությանը: Նրա բաց վերաբերմունքն ու իր մեծ տատիկի ժառանգության հանդեպ պատասխանատվության խոր զգացումը հնարավոր դարձրին այս թեմայով երկարաժամկետ աշխատանքը, եւ մեր համագործակցությունը շարունակվում է նաեւ այսօր՝ Դիանա Աբգարին առնչվող ընթացիկ նախագծերի շրջանակում:

Կցանկանայի հիշատակել նաեւ Դիանայի թոռնուհի **Լյուսիլ Աբգարին**, որը մահացավ 2021 թվականին: Նրա հուշագրությունը՝ գրված Ճապոնիայում իր մանկության հիշողությունների հիման վրա, անգնահատելի աղբյուր էր իմ հետազոտության համար եւ արդեն կարեւոր դեր էր խաղացել ավելի վաղ ուսումնասիրություններում, այդ թվում՝ ձեր աշխատանքում, Արծվի: Մեր նամակագրությունը, որը շարունակվեց մինչեւ նրա կյանքի վերջին ամիսները, ինձ հնարավորություն տվեց գտնել Դիանայի քրոջ սերունդներին Անգլիայում եւ վերակառուցել ընտանիքի լայն ցանցը: Լյուսիլն առանձնահատուկ անկեղծ էր եւ երբեմն՝ ապշեցուցիչ կերպով շիտակ: Հիշում եմ, թե ինչպես մի անգամ, իմ բազմաթիվ հարցերից հետո, նա ինձ գրեց. «Մելինե՛, ինձ հանրագիտարանի տե՞ղ ես դրել»: Այս խոսքն ինձ համար մնացել է հիշեցում թե՛ հիշողության սահմանների, թե՛ հետազոտողի պատասխանատվության մասին:

# Մելինե Մեսրոպյան. Հայկական հետքեր ճապոնական արխիվներում եւ նոր բացահայտումներ Դիանա Աբգարի մասին



Դիանա Աբգարի հոգածությանն արժանացած հայ փրկվածների բազմաթիվ ժառանգներ ինձ տրամադրել են ընտանեկան արխիվներ, նամակներ, լուսանկարներ եւ հիշողություններ, որոնք նրա մարդասիրական գործունեությունը կենդանի եւ շոշափելի են դարձրել:

Լրացուցիչ աջակցություն եմ ստացել **Լիզ Չաթերից**, որն ինձ ուղղորդել է դեպի կարեւոր աղբյուրներ, ինչպես նաեւ՝ «Ֆուջիվարա Շոտեն» հրատարակչությունից եւ դրա տնօրեն Յոշիո Ֆուջիվարայից, որոնց հետաքրքրությունը Հայաստանի եւ Դիանա Աբգարի հանդեպ հնարավոր դարձրեց հրատարակությունը: Մեր խմբագիր **Տակու Կարիյայի** մանրակրկիտ ուշադրությունը ձեւավորեց գրքի վերջնական տեսքը: Տոհոկու համալսարանի գրադարանի աշխատակիցների աջակցությունը, ինչպես նաեւ Ճապոնիայում, Հայաստանում եւ արտերկրում գտնվող բազմաթիվ գործընկերների օգնությունը եւս կարեւոր դեր ունեցան այս հետազոտության ողջ ընթացքում:

**-2017-ին ճապոնացի հայերենագետ Դաիսակու Վատանաբեն իմ խնդրանքով հայերեն գրած «Ճապոներեն նյութեր Դիանա Աբգարի մասին» հոդվածում («Ազգ», 2017-01-12) գրել է, որ «Աբգարի մասին նյութերի սակավության եւ նրա հետնորդների՝ ամբողջ աշխարհում ցրվելու պատճառով նրա մասին ուսումնասիրության մեջ դեռ շատ հարցեր են մնում, որոնք պետք է բացահայտվեն: Ցանկանում ենք, որ այդ պակասը լցվի Հայաստանի եւ Ճապոնիայի գիտաշխատողների համագործակցությամբ»: Կարո՞ղ ես նշել, թե ինչեր բացահայտեցիր:**

-Դաիսակուի դիտարկումը լիովին ճիշտ է: Երբ սկսեցի այս հետազոտությունը, արդեն ակնհայտ էր, որ Դիանայի մասին բազմաթիվ հարցեր մնում են անպատասխան ոչ թե հետաքրքրության պակասի, այլ այն պատճառով, որ աղբյուրները ցրված են տարբեր երկրների, լեզուների եւ արխիվների միջեւ: Իմ հետազոտությունն աստիճանաբար ցույց տվեց, թե որքա՜ն շատ բան է բացահայտվում, երբ հայկական նյութերը կարդացվում են ճապոնական եւ միջազգային աղբյուրների հետ միասին:

Իմ հիմնական ներդրումներից մեկը Դիանայի կյանքի ամբողջական վերակազմությունն էր՝ ոչ թե առանձին բեկորներով, այլ որպես միասնական կենսագրություն: Սա ներառում է նրա ընտանեկան ծագման, մանկության միջավայրի, կրթության եւ ամուսնության վաղ շրջանի մասին տեղեկությունների վերականգնումը, ինչը օգնեց հասկանալ, թե ինչպես էր ձեւավորվել նրա աշխարհայացքը դեռեւս Ճապոնիա ժամանելուց շատ առաջ: Կարողացա նաեւ պարզաբանել, թե ինչո՛ւ Աբգար ընտանիքը Ճապոնիա էր եկել ոչ թե որպես նորապսակ ճանապարհորդներ, այլ որպես գործարարներ:

Մեկ այլ մեծ բացահայտում վերաբերում է նրա գրական ժառանգությանը: Երբ սկսեցի հետազոտությունը, Դիանայից հայտնի էին քսանից պակաս հոդվածներ: Երկարատեւ արխիվային աշխատանքի շնորհիվ կարողացա գտնել ավելի քան 180 հոդված, որոնք հրապարակվել են մոտավորապես 1904-1936 թվականներին՝ ճապոնական եւ միջազգային մամուլում: Սա հնարավորություն տվեց հետեւել նրա քաղաքական եւ մարդասիրական գաղափարների զարգացմանն ավելի քան երեք տասնամյակի ընթացքում եւ տեսնել, թե որքա՜ն հետեւողականորեն էր նա ներգրավված միջազգային հարցերում եւ հայկական խնդրում:

Նույնքան կարեւոր էին նրա մասնավոր նամակագրությունները նշանավոր գործիչների հետ: Այդ նամակները բացահայտում են Դիանա Աբգարի ավելի անձնական կողմը՝ նրա կասկածները, հիասթափությունները, երկարաժամկետ ռազմավարությունները եւ ներքին մտորումները, որոնք երբեք չեն հայտնվել նրա հրապարակված գրություններում:

Ինստիտուցիոնալ տեսանկյունից կարեւորագույն հայտնագործություններից մեկը 2013 թվականին, մագիստրոսական հետազոտության ընթացքում, Ճապոնիայի դիվանագիտական փաստաթղթերի բացահայտումն էր, որոնք վերաբերում էին նրա նշանակմանը Հայաստանի Առաջին Հանրապետության պատվավոր հյուպատոս: Այս նյութերը պարզաբանեցին, թե ինչպես էր նրա նշանակումն ընկալվում ճապոնական պաշտոնական շրջանակներում եւ օգնեցին ուղղել մինչ օրս շրջանառվող չափազանցված կամ ոչ ճշգրիտ պնդումները:

Բացի այդ, Ճապոնիայի Ներքին գործերի նախարարության եւ Արտաքին գործերի նախարարության հետ նամակագրությունը լույս սփռեց այն հարցի վրա, թե ինչպես էին գործնականում մշակվում հայ փախստականների դիմումները: Երբ այս նյութերն ընթերցվում են Վլադիվոստոկում Ամերիկյան Կարմիր խաչի փաստաթղթերի հետ համատեղ, բացահայտվում են մարդասիրական գործունեության կոնկրետ մեխանիզմները, անգամ ներգաղթային խիստ ռեժիմի պայմաններում:

Իմ հետազոտությունը ցույց տվեց նաեւ, որ Դիանայի հարաբերությունը Ճապոնիայի հետ ժամանակի ընթացքում փոփոխվել է: Երեք տասնամյակների ընթացքում նրա գրությունները եւ նամակները արտացոլում են զգուշավոր հեռավորությունից անցում դեպի ավելի բարդ՝ կապվածության, քննադատության եւ հուզական վերաբերմունքի մի խառնուրդ: Սա կարեւոր է նրան հասկանալու համար որպես Ճապոնիայում երկար տարիներ ապրած բնակչի, ոչ միայն որպես մարդասիրական գործչի:

Վերջապես, ուզում եմ ընդգծել, որ այս հետազոտությունն ուղղակիորեն հիմնվում է ավելի վաղ հայկական գիտական հետազոտությունների, հատկապես ձեր գործի վրա, Արծվի՛: Իմ նպատակն այդ հիմքը փոխարինելը չէր, այլ դրա ընդլայնումը՝ հայկական աղբյուրները տեղադրելով ավելի լայն ճապոնական եւ միջազգային փաստագրական շրջանակում: Տարբեր լեզուներով եւ տարբեր արխիվներում պահպանվող աղբյուրների զուգահեռ ընթերցման միջոցով սկսում է ուրվագծվել Դիանա Աբգարի կյանքի ավելի շարունակական, նրբերանգված եւ պատմականորեն հիմնավորված պատկերը, եւ համոզված եմ, որ դեռեւս շատ բան կա բացահայտելու:

***Վերջը՝ հաջորդիվ:***

# Դեռ տեսնելու ենք ներկայի շրջադարձը

⇨2 Շարունակենք «Ազերթաջի» ընթերցումը. «Դեսպան Նասիմի Աղաեւն ելույթում նշեց, որ 2020 թվականի հայրենական պատերազմից հետո (արտոնո՞ւմ են ԳԴՀ, ՀՀ ԱԳՆ-ները «հայրենական» եզրույթը, սա նվազագույնը բողոքի առիթ պիտի դառնա, ագրեսորի ոճը պիտի զսպվի- **ԱՆ.Հ.**) նախագահ **Ալիեւի** հեռատես եւ ռազմավարական ղեկավարության ներքո, սկսել է կոնկրետ քայլեր ձեռնարկել տարածաշրջանում երկարատեւ խաղաղություն եւ կայուն պայմաններ հաստատելու ուղղությամբ: Ադրբեջանը նախաձեռնել է խաղաղության օրակարգը, առաջարկել խաղաղության համաձայնագրի հիմնարար սկզբունքները եւ ներկայացրել իր առաջին նախագիծը: Չնայած բանակցությունները երկկողմ են եղել, Գերմանիան կառուցողական դեր է խաղացել՝ հատկապես վճռորոշ փուլում: Աղաեւը հավելել է, որ երկարատեւ եւ իրավաբանորեն ամուր խաղաղության համար ՀՀ սահմանադրության լիակատար համապատասխանեցումը խաղաղության համաձայնագրի սկզբունքներին եւ Ադրբեջանի նկատմամբ բոլոր տարածքային պահանջների անհապաղ վերացումը առաջնային նշանակություն ունեն»:

«Ազերթաջի» Բեռլինի թղթակիցը չի գրում՝ ՀՀ դեսպանը, մասնակիցներից որեւէ մեկը հակադարձե՞ց, պարզաբանե՞ց, հիշեցրե՞ց, թե ՀՀ սահմանադրությանը միջամտելու արտոնություն չունի Ադրբեջանը, իսկ տարածքային պահանջների առումով արտգործնախարար **Միրզոյանը** դեռ 2023-ի աշնանը, երբ ԳԴՀ ԱԳ նախարար **Բերբոքը** Երեւանում էր, հաջորդ օրը Բաքու պիտի մեկներ, հստակեցրեց, թե ադրբեջանական ԶՈՒ-ն ապօրեն զբաղեցնում է ՀՀ 200 քմ-ից ավելի տարածք:

«TRIPP-ի կարեւորության վերաբերյալ Աղաեւը նշել է, որ երթուղին Ադրբեջանի եւ Նախիջեւանի միջեւ կապի անարգել վերականգնում է, կամրապնդի խաղաղությունը՝ համատեղ տնտեսական շահի միջոցով: TRIPP -ը մեծ նշանակություն ունի տարածաշրջանում առեւտրի եւ կապի դիվերսիֆիկացման համար, ինչը կբարելավի Եվրոպայի եւ Գերմանիայի մատակարարման շղթաները»:

Հարավային Կովկասում պատմական պահը, ժամանակը շրջադարձային է որակել Համբուրգի համալսարանի իրավաբան պրոֆեսոր **Օտտո Լուխթերհանդը** 2020-ին, երբ Ադրբեջանը 1994-ի հրադադարի ուժի չկիրառման հանձնառությունը խախտելով, Թուրքիայի օգնությամբ, միջազգային իրավունքը ոտնահարելով, Արցախի ինքնորոշման իրավունքի դեմ ռազմական ագրեսիա ձեռնարկեց:

Վաղ, թե ուշ միջազգային դատարանի առջեւ են կանգնելու պատերազմի հրձիգները, ինքնորոշման իրավունքը ոտնահարողները, բնիկ ժողովրդի բռնագաղթը տնտեսական եւ առեւտրային շահով մաքրազտողները: Դեռ տեսնելու ենք ներկայի շրջադարձը:

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ**
**Գերմանիա**

# «Բեմն ուժեղներինն է». Գայանե Գեղամյանի հոբելյանական համերգն էր

ՀԱՍՄԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

*Օպերային երգչուհի, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի Ակադեմիական երգեցողության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, Մովսես Խորենացու մեդալակիր* ***Գայանե Պարույրի Գեղամյանի*** *հոբելյանական համերգը, կարելի է ասել, երգչուհու նախկին եւ ներկա սաների (թեեւ այս դեպքում նախկիններ չկան) ընծան էր իրենց դասախոսին, որի տված դասերի, հոգատարության, նաեւ խստության շնորհիվ իրենք իրենց ոլորտում հաջողությունների են հասել, շատերը՝ աշխարհի ամենահայտնի բեմերին:*



Համառոտ՝ հոբելյարի մասին. Կ. Սարաջեւի անվ. երաժշտական դպրոցում, ապա եւ Ռ. Մելիքյանի անվ. երաժշտական ուսումնարանում ուսանելուց հետո Գ. Գեղամյանը 1982-1988թ.թ. սովորել է Երեւանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի ակադեմիական վոկալ բաժնում՝ պրոֆեսոր **Ա. Մ. Սարաջեւայի** դասարանում: 1993-2013 թ.թ. եղել է Ալ. Սպենդիարյանի անվ. օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի մեներգչուհի, գլխավոր դերերգերով հանդես եկել Պ. Ի. Չայկովսկու «Իոլանտա», «Պիկովայա դամա», Ռ. Լեոնկավալլոյի «Պայացներ», Ջ. Վերդիի «Պարահանդես դիմակահանդես», «Տրուբադուր», «Աիդա», Ջ. Պուչինիի «Չիո-Չիո սան», Վ.Ա. Մոցարտի «Դոն Ժուան», Ջ. Գերշվինի «Պորգի եւ Բես» եւ այլ օպերաներում: Մենահամերգներ է ունեցել հայաստանյան բեմերին եւ արտերկրում՝ ԱՄՆ-ում, Արգենտինայում, Բրազիլիայում, Կորեայում, Սերբիայում, Իտալիայում, Ռուսաստանում, այլուր: 1993-ից Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայում վարում է մասնագիտական դասարան: Ընդգրկվել է հեղինակավոր միջազգային մրցույթների ժյուրիների կազմում: Հեղինակել է իր դասախոսի՝ պրոֆ. Ա. Մ. Սարաջեւայի կյանքին եւ գործունեությանը, ինչպես նաեւ վերջինիս վոկալ մեթոդիկային նվիրված աշխատություններ, մի շարք այլ գրքեր: Գ. Գեղամյանի սաներն են Հրաչուհի Բասենցը, Պերճ Քարազյանը, Գոհար Ազիզյանը, Լուսինե Ղազարյանը, Արտավազդ Զաքարյանը, Նարինե Մելիտոնյանը, Հասմիկ Թորոսյանը, Ռիմա Խաչատրյանը, Արմինե Շախնազարյանը, Մերի Մկրտչյանը, Լուսինե Մակարյանը, այլք:



Ամեն ուսուցիչ հպարտանում է իր «ցանած սերմերի» տված հունձքով: Գ. Գեղամյանը, այս առումով, հպարտանալու շատ առիթներ ունի: Իրեն աշակերտած բազմաթիվ երգիչ-երգչուհիներ մեծ հաջողությունների են հասել եւ շարունակում են գրավել մեծ բեմերը:

Նրա սաներն իրենց դասախոսի հոբելյանական համերգին իտալական երգերի մի ընտրյալ «փունջ» բեմադրեցին Կոմիտասի անվ. կամերային երաժշտության տան բեմին, եւ ելույթ ունեցողների մեջ էր **Հրաչուհի Բասենցը**: Նա փայլուն հաջողությունների իր շրջանն է ապրում արդեն երկար ժամանակ, եւ այս ընթացքում դարձյալ ամրապինդ կապված է իր վարպետին՝ թե՛ որպես սան, թե՛ որպես բարեկամուհի: Գ. Գեղամյանը, ոնց նկատել եմ, շարունակում է մնալ Հրաչուհու կարեւոր խորհրդատուն, ուղղորդողը, ոգեւորողը: Եվ զարմանալի չէր, որ երգչուհին պոկվել-եկել էր Եվրոպայից՝ իր Գայանե Պարույրովնայի հոբելյանական համերգին հանդես գալու համար: Նաեւ անկեղծ, սիրահույզ խոսք հնչեցրեց բեմից. «Դո՛ւք, հենց դո՛ւք եք իմ ձայնը հղկողը, հսկողն ու ուղղություն տվողը եւ վաղո՜ւց արդեն ոչ միայն ձայնի ու մասնագիտական ճանապարհի խորհրդատուն, այլեւ կյանքի ավագ ընկերը, «կոնսերվատորիայի իմ մայրը»: Մայր՝ բառիս բուն իմաստով՝ տվող, կերտող, սիրող, միեւնույն ժամանակ՝ խիստ ու պահանջկոտ: Ձեզ սիրում ենք, ձեզ հարգում ենք, ձեզ երախտապարտ ենք... Դասախոսությունն ամենաբարդ եւ ամենապատասխանատու արվեստներից է, ես կասեի՝ մարտարվեստ է, եւ այն միայն ուժեղների համար է: Բեմն ուժեղներինն է, եւ հենց ձեր խստությունն ու պահանջկոտությունն են, որ մեզ դարձնում են բեմի մարդիկ, որովհետեւ բեմը զուտ զգացմունքների եւ գեղեցիկ ձայնի ցուցադրության հարթակ չէ: Այն մարտադաշտ է, պիտի հաղթես ինքդ քեզ եւ հետո՝ մնացյալը: Դուք տարիներ շարունակ ոչ միայն ձայնամշակմամբ եք զբաղվել, այլ նաեւ կերտել ու փոխանցել եք վարպետություն, ինքնավստահություն, հավատ սեփական ուժերի նկատմամբ: Ձայնը չի ծնվում միայն շնչից, այն նաեւ ցավի, սիրո ապրումների փոխանցողն է, եւ դուք սովորեցրել եք ցանկացած իրավիճակում մնալ պրոֆեսիոնալ եւ հուսալի արտիստ...»:

Համերգին հնչած իտալական սարսուելաները մշակել եւ գործիքավորել էր մաեստրո **Սեդրակ Երկանյանը**: Նրա եւ Գայանե Գեղամյանի ստեղծագործական ու մարդկային համագործակցություն-բարեկամությունը քառորդ դարի պատմություն ունի: Պատահական չէր, որ երգչուհու հոբելյանական համերգի զգալի մասն անցավ Ս. Երկանյանի ղեկավարած՝ **Հնագույն երաժշտության «Տաղարան»** համույթի նվագակցությամբ: Մաեստրոն էլ մինչ դիրիժորական վահանակին մոտենալը շնորհավորական խոսք հղեց երգչուհուն, մարդուն, ընկերոջը:



Համերգը վարում էր երաժշտագետ **Նոնա Ոսկանյանը**:

«Տաղարան»-ի, ինչպես նաեւ դաշնակահարներ **Աննա Ճուղուրյանի**, **Իզաբելլա Շախսուվարյանի** նվագակցությամբ հանդես եկան Լուսինե Մակարյանը, Լուիզա Գրիգորյանը, Տատյանա Հմայակյանը, Սյուզաննա Ավետիքյանը, Հովհաննես Օրդանյանը, Մարգարիտա Սարգսյանը, Արփինե Աղջոյանը, Գուրգեն Պողոսյանն ու Եվա Գեւորգյանը:

**Լուսինե Մակարյանը** Գ. Գեղամյանի դպրոցն անցած լավագույն սաներից է: Նա ներկայումս Ալ. Սպենդիարյանի անվ. օպերային թատրոնի երգչուհին է, բազմաթիվ դերերգեր, այդ թվում՝ գլխավոր, արդեն իրեն են վստահել: Երիտասարդ երգչուհին այս համերգին կատարեց Ջ. Վերդիի «Սիցիլիական երեկո» օպերայից «Ելենայի բոլերոն»-ը: **Լուիզա Գրիգորյանը** կատարեց Պաբլո Լունայի «Հրեա տղան» սարսուելայից «Իսպանիայից եմ գալիս» երգը, իսկ **Տատյանա Հմայակյանը**՝ Միգել Սանդովալի «Առանց քո սիրո» երգը: Հիշատակելի է **Գուրգեն Պողոսյանի** բեմելույթը եւս. այս խոստումնալից երիտասարդն արդեն տարբեր բեմերում հանդես գալու լուրջ փորձ է կուտակել եւ երկար ճանապարհ ունի առջեւում՝ արվեստում է՛լ առավել հաստատվելու համար: **Հովհաննես Օրդանյանի** անչափ գեղեցիկ ձայնը հայտնություն էր ներկաներից շատերի համար. ձայնի մշակվածության աստիճանը եւ կատարողական արվեստի ցուցադրած մակարդակը մեծապես իր դասախոսի հաղորդած դասերի արդյունքն են:

**Սյուզաննա Ավետիքյանի** մարմնավորած կերպարը հիշվեց ցայտուն կանացիությամբ, անբռնազբոսությամբ: Ժորժ Բիզեի «Կարմեն» օպերայից «Գնչուական երգ»-ը կատարելիս, հատկապես, պետք է համոզիչ լինես. հանրածանոթ հերոսուհու բազում կերպավորումներին ծանոթ հանդիսականին Գ. Գեղամյանի սանուհին համոզեց, դուր եկավ ունկնդիրներին:

Մի առանձին վերաբերմունքով եմ գրում **Մարգարիտա Սարգսյանի** մասին: Նրա ընթացքին վաղուց եմ հետեւում՝ սկսած Գ. Գեղամյանի դասարանային համերգներից մինչեւ այլ համերգների շրջանակներում իր բեմելույթները: Իր հաջողություններից, իմ տպավորությամբ, չի մեծամտանում, կիրթ է եւ բարեհամբույր, բեմին իր պահվածքը բնական է, գնալով վարպետանում է՝ հավասարակշռված, հետեւողականորեն...

Համերգի փայլուն դրվագներից մեկն էլ **Եվա Գեւորգյանի** ելույթն էր: Եվան «Տաղարան» համույթի երաժիշտն է, նվագում է կոնտրաբաս, բայց եւ հավասարապես տպավորիչ է նրա երգեցողությունը. դասեր է առել Գ. Գեղամյանից, եւ այդ ուսումնառության շնորհիվ է նաեւ, որ Եվան այսպես «տիրապետում» է իր ձայնին: Շատ արտիստիկ է, կանացի՝ իր նվագարանի կողքին եւ այն էլ՝ միաժամանակ երգելիս. այս կերպարն ուղղակի հմայիչ է, անմոռանալի:

Գայանե Գեղամյանի հոբելյանական երեկոն ավարտվեց իր եւ իր վաղեմի սանուհու Հրաչուհի Բասենցի զուգերգով:

# Իրանի անկայունության հնարավոր հետեւանքները վտանգավոր են Հայաստանի համար

ՍՈՒՐԵՆ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Միջազգայնագետ, ԱՄՆ արտաքին քաղաքականության փորձագետ




Վերջին շաբաթներին լարված քննարկումներ էին տեղի ունենում՝ կապված Իրանում կատարվող իրադարձությունների հետ: Մ. Նահանգների նախագահ **Դոնալդ Թրամփին** ներկայացվեցին Իրանի դեմ ռազմական հնարավոր գործողությունների զանազան տարբերակներ, որոնց թվում նույնիսկ հարվածներ հասցնելն էր ռազմական որոշակի հաստատությունների կամ ռազմավարական կարեւոր տեղանքների վրա: Սակայն, Թրամփի վարչակազմը վերջնական որոշում չընդունեց եւ կարծես նախընտրեց սպասել եւ տեսնել, թե ցուցարարները իրենք ինչ արդյունքի կհասնեն: Միաժամանակ, սակայն, նախագահ Թրամփը հայտարարեց, որ որեւէ երկիր որ կշարունակի առեւտրական գործունեություն ծավալել Իրանի Իսլամական Հանրապետության հետ, կենթարկվի 25 տոկոսի չափով հավելյալ տուրք վճարել Մ. Նահանգների հետ ամեն տեսակի ապրանքաշրջանառության համար:

Իր հերթին, Թեհրանում Մ. Նահանգների դեսպանատունը հորդորեց ամերիկացի քաղաքացիներին ինչքան հնարավոր է շուտ հեռանալ Իրանից՝ Թուրքիայի կամ Հայաստանի տարածքով: Պատմականորեն նման զգուշացումներ հաճախ նախորդել են հնարավոր օդային հարձակումները կամ ավելի ընդարձակ ռազմական գործողությունները, որոնք Իրանում իշխանափոխության առիթ են հանդիսացել: Հատկանշական է այն, որ «հավատո՞ւմ եք արդյոք, որ նախկին Շահի որդին կարող է դառնալ Իրանի հաջորդ առաջնորդը» հարցին, Թրամփը պատասխանել էր, ասելով՝ «դրա անհրաժեշտությունը չկա եւ առավել խելամիտ կլինի սպասել եւ տեսնել, թե տեղական ուժերից որեւէ մեկը կհայտնվի՞ արդյոք եւ կհաստատի՞ իր իշխանությունը»:

Բնական էր, որ Իրանի պատմության մեջ բողոքի ամենամեծ շարժումներից այս մեկի զարգացումներին ուշի-ուշով հետեւեցին Իսրայելն ու Մ. Նահանգները: Երբ արտաքին դերակատարները զգում են, որ հնարավոր է ազդել իրադարձությունների վրա, կամ խորացնել ապակայունության մթնոլորտը Իրանում, նրանք ամենայն հավանականությամբ նախընտրում են գործել այդ ուղղությամբ: Մ. Նահանգների նախագահին ու իր վարչակազմի որոշ ավագ պաշտոնյաներ շարունակ զգուշացնում էին եւ նույնիսկ սպառնում, որ հնարավոր է Իրանի դեմ հարձակումներ իրականացնել: Նախագահ Թրամփն ինքը առնվազն վեց թե յոթ անգամ այդ բնույթի հայտարարություն կամ սոցցանցերում գրանցում կատարեց:

Իրանի ներկա կառավարության հնարավոր տապալումը, ինչ խոսք, ներքին անկայունությունից այն կողմն անցնելով հեռահար հետեւանքներ կունենար նաեւ ամբողջ տարածաշրջանում: Կենտրոնական դերակատարություն ունեցող հեղինակավոր հզոր մի պետության թուլացումը առաջացնելու էր ուժային մի վակուում, որը հաճախ կրոնական կամ էթնիկական խմբավորումների առաջացման պատճառ կարող է դառնալ, ինչը չափազանց հնարավոր էր Իրանի պարագայում:

Գլխավոր հարցն այն էր, որ իշխանափոխության հետեւանքում Իրանը կկարողանա՞ր պահպանել իր տարածքային ամբողջականությունը, թե՞ կհետեւեր բազմաթիվ այլ պետությունների օրինակին, որոնք տարածքներ կորցրեցին հեղափոխությունների, ներքին պառակտումների, մասնատումների կամ Միջին Արեւելքի որոշ մասերում քաղաքացիական եւ էթնիկական հակամարտությունների հետեւանքով: Մի խոսքով, ոչ մի երկիր, այդ թվում նաեւ էթնիկական խմբավորումներով հարուստ Իրանում, ամբողջովին երաշխավորված չէր սցենարի կրկնությունից:

Իրանի տարածքային ամբողջականության խախտումը կամ երկարատեւ ապակայունացումը երկրի ներսում անշուշտ չէր բխում Հայաստանի շահերից: Նախ, որովհետեւ Իրանը օթեւան է մեծ թվով հայկական կազմավորված մի համայնքի: Երկրորդ՝ որեւէ անկայունություն կարող էր առաջացնել բնակչության զանգվածային տեղաշարժ՝ փոքրամասնություններին եւ վերաբնակիչներին դնելով վտանգի առաջ: Հայաստանի համար Իրանը արդեն երկար ժամանակ է ինչ հանդիսանում է դարերի պատմություն ունեցող բարեկամական հարեւան եւ կացության որեւէ վատթարացում այնտեղ իր անմիջական ազդեցությունն էր ունենալու Հայաստանի անվտանգության եւ տնտեսության վրա: Ավելին, Իրանի մասնատման դեպքում, բացառված չէր, որ Հայաստանի սահմանի երկարությամբ հայտնվեր մի նոր ադրբեջանամետ կամ Ադրբեջանի ազդեցության տակ գտնվող մի վարչակազմ: Հաշվի առնենք, որ էթնիկ ադրբեջանցիներն Իրանում կազմում են բնակչության մոտ 20 տոկոսը:

Նման սցենարը մեծապես ձեռնտու կլիներ ինչպես Բաքվին, այնպես էլ Անկարային, նկատի ունենալով նրանց կապը եւ հնարավոր ազդեցությունը Իրանի ադրբեջանական համայնքների վրա:

Միեւնույն ժամանակ, Իրանի թուլացումը նշանակելու էր Հարավային Կովկասում Թուրքիայի դերակատարության ընդարձակում, ինչը պատմականորեն միայն հզոր եւ միասնական Իրանը կարողացել էր ցարդ զսպել:

Հատկանշական էր, որ զանգվածային անկարգությունները տեղի ունեցան ոչ միայն Իրանում, այլեւ աշխարհի տարբեր երկրների իրանական դեսպանատների առաջ: Հայաստանը բացառություն չէր կազմում: Այդ ցույցերը Իրան-Հայաստան հարաբերությունները ստուգելու յուրատեսակ առիթ հանդիսացան: ՀՀ-ում Իրանի դեսպանն իր դժգոհությունը արտահայտեց ցույցերի ընթացքի եւ իրավապահ մարմինների գործողությունների վերաբերյալ: Կացությունն այն աստիճանի հասավ, որ ՀՀ վարչապետ **Նիկոլ Փաշինյանն** անձամբ փորձեց լարվածությունը հանդարտեցնել եւ կարգավորել իրադարձությունը՝ հայտարարելով, որ Հայաստանը միշտ էլ հաշվի է առնում իր բարեկամ հարեւանի՝ Իրանի շահերը: Համենայնդեպս, Իրանի արձագանքը հասկանալի էր, քանի որ լարված իրավիճակում դժվար է հանգստություն պահպանել:

Հակառակ Իրանի հանդեպ կիրառված պատժամիջոցների, այդ երկիրը արտաքին աշխարհի հետ կապի կրիտիկական դարպաս է հանդիսանում Հայաստանի համար, պահպանելով քաղաքական, տնտեսական եւ առեւտրական հարաբերություններ: Կացության որեւէ վատթարացում Իրանում անմիջականորեն ազդելու էր Հայաստանի վրա: Դեռեւս անհասկանալի է մնում այն, թե ինչպես է նախագահ Թրամփն իրականացնելու իր նախատեսած 25 տոկոս հարկի գանձումը բոլոր այն երկրներից, որոնք շարունակելու են առեւտուր անել Իրանի հետ: Այդ հայտարարությունը դժվար երկընտրանքի առաջ է կանգնեցնում նաեւ Հայաստանին, որը կա՛մ շարունակելու է առեւտուրը Իրանի հետ եւ պատժական հարկերը վճարելու ԱՄՆ-ին, կա՛մ էլ դադարեցնելու է գործակցել Իրանի հետ՝ խուսափելու համար այդ հարկերից:

Գործնականում, սա մեծագույն մարտահրավերն է, որ Հայաստանը ստիպված է դիմակայել, հակա-իրանական սանկցիաների ամբողջ ընթացքում, որովհետեւ ցարդ գործարարներն ու տնտեսական ոլորտի աշխատողները որոշ չափով հարմարվել էին եւ գտել էին որոշակի լուծումներ գործելու մինչ այժմ գործող պատժամիջոցների պայմաններում: Ամենատարբեր սցենարների դեպքում Հայաստանը միշտ էլ կանգնած է լինելու դժվարին եւ ծանրագույն դժվարին միջեւ ընտրություն կատարելու անհրաժեշտության առաջ: Հակառակ ռազմական միջամտությունից խուսափելու Ամերիկայի որոշմանը, կացությունը դեռեւս մնում է չկարգավորված:

Անգլ. բնագրից թարգմանեց՝
ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ
(The Arm. Mirror-Spectator)

## Իմաստաբանական բառարան

### *Տասովշիկ*

Հայերենն իր բառակազմական հնարքներով աշխարհի ամենաճկուն լեզուներից է: Ասածս չափազանցություն չէ եւ լիովին ապացուցելի: Խոսենք օրինակների լեզվով:

Բազմաթիվ հնարավոր օրինակներից իմ ընտրությունը, հասկանալի պատճառներով, կանգ է առել «ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառի շուրջ ձեւավորված լեզվական իրողությունների վրա:

Ենթադրենք՝ անհրաժեշտ է խոսել մի երեւույթի մասին, որը վերաբերում է ընտրություններից առաջ ընտրողներին խրախուսական գումարներ հասկացնելուն: Շատ ժողովուրդներ իրենց ազգային լեզուներում այդ երեւույթը արտահայտելու համար ստիպված են կազմել ամբողջական նախադասություններ: Իսկ մենք՝ հայերս, նույն միտքն արտահայտում ենք ընդամենը մեկ բառով՝ «**ԸՆՏՐԱԿԱՇԱՌՔ**», որն ունի մեկ շեշտ եւ մեկ իմաստային ամբողջություն:

Մեկ այլ օրինակ: Լինում են դեպքեր, երբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տեսադաշտում հայտնվում են համապետական ընտրությունների գործընթացը խաթարող անձինք: Մեզ ծանոթ գրեթե բոլոր լեզուներում այդ բառիմաստը փոխանցելու համար հարկ է կազմել ընդարձակ անվանական բառակապակցություն, օրինակ՝ «որոշակի գումարի դիմաց ընտրությունների ընթացքը խաթարելուն ուղղված քրեորեն պատժելի արարքին մասնակցող անձ»:

Իսկ մենք նույն գաղափարը կարողանում ենք արտահայտել ընդամենը մեկ բարեհունչ բառով՝ «**ԸՆՏՐԱԿԵՂԾԱՐԱՐ**»: Այստեղ մենք զիջում ենք միայն «**ՏԱՍՈՎՇԻԿ**» բառի հեղինակ ռուսներին:

Եվս մեկ ապացույց: Ընտրություններից առաջ կազմվում են ընտրողների ցուցակներ, որոնք հայերենի բառակազմական հնարքներին զիջող մյուս լեզուներում հնչում են այսպես՝ «ընտրողների անձնական տվյալներ պարունակող ցուցակներ»:

Մենք այստեղ էլ շահեկան դիրքում ենք, քանի որ նույն բարդ միտքն արտահայտում ենք մեկ բառով՝ «**ԸՆՏՐԱՑՈՒՑԱԿ**», որի մեջ ներառում ենք ոչ միայն դեռեւս կենդանի, այլ հաճախ նաեւ հանգուցյալ, ինչպես նաեւ էմիգրանտ ընտրողների անձնական տվյալները:

Հայերենի ճկունության փաստը կարելի է ապացուցել նաեւ ընտրություններից առաջ կուսակցությունների կողմից իրականացվող քարոզչական աշխատանքի օրինակով: Այլ լեզուներում այդ երեւույթը ներկայացվում է բազմաբառ բառակապակցություններով, մինչդեռ հայերենում այն ստացել է մեկ ամբողջական, բարեհունչ անուն՝ «**ԸՆՏՐԱՊԱՅՔԱՐ**»:

Վերը նշվածին կարող էի ավելացնել նաեւ «**ընտրարշավը**», «**ընտրաշրջանը**», «**ընտրազանգվածը**», «**ընտրատեղամասը**» եւ այլ բառեր:

Համոզիչ չէ՞ր:

Գ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

# Լուրերի ծրագրի, պաշտոնյաների պարգեւավճարների ու մյուս բոլորի պետական աշխատավարձերի մասին

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

Հանրային հեռուստատեսության լուրերի ծրագիրը նայելն արդեն շատ դժվար է: Գործի բերումով այն միշտ պարտադիր դիտողիս համար՝ գրեթե անհնար, երբեմն նյարդային ցնցումների պատճառ (ստեղծագործական կազմին դրա համար առանձնապես չենք մեղադրում ու նաեւ չենք նախանձում՝ հասկանալով...):

Նախ, հնարավոր չէ չնկատել, որ այդ ծրագիրը հիմնականում դարձել է, ասես, վարչապետի ու ՔՊ-ի խոսափողը՝ դրանից բխող բոլոր հետեւանքներով: Մեկը կարող է հարցնել՝ իսկ մի՞թե առաջվա իշխանությունների օրոք այդպես չի եղել: Այո, եղել է, բայց ոչ այս աստիճանի ու այս դրսեւորումներով: Մեկ էլ համարյա ամենօրյա ռեժիմով պիտի լսես, մեղմ ասած, ինչ-որ անհասկանալի գաղափարներ ու դատողություններ, հետո դրանք չմարսած՝ հաջորդ օրը նորերը, եւ այսպես շարունակ: Հիմա էլ արդեն ամեն ինչ ներկայանում է գալիք համապետական ընտրությունների քարոզչության տրամաբանությամբ, ինչը մինչեւ հունիս հետզհետե ուժեղանալու է: Օրինակ, շուտ-շուտ թմբկահարում են 300 դպրոցների նորոգման, հիմնանորոգման կամ կառուցման ծրագիրը, համեստորեն լռելով, որ դրա դիմաց երկրի համարյա 250 գյուղերում եղած դպրոցներն ընդհանրապես փակելու են... Ասում են՝ մի քանի աշակերտի համար, ոչ բավարար պայմաններում ինչպե՞ս դպրոց պահեն: Իսկ իրական խնդիրն էլ հենց այդտեղ է, այնպես աշխատենք, որ գյուղը զարգանա, ամրանդվի ու երեխաներ ծնվեն, հետզհետե պայմաններ ստեղծենք, ոչ թե այսրոպեական հարց լուծելով՝ հայ գյուղը դատարկվի: Ի դեպ, այս վերջինի լուրջ պատճառ կարող է լինել նաեւ համայնքների կատարված ներկա համատարած ու անհեռատես «խոշորացումը»:

«Լուրերը» միացնում ենք երկրի անցուդարձից, խնդիրներից տեղեկություններ իմանալու, մեկ էլ Ազգային ժողովի նիստի երկար հեռարձակումն է, ու վարչապետի՝ հերթով ամբիոնին մոտեցող երիտասարդ նվիրյալ հետեւորդները, իրար հետ մրցելով, իրար ետեւից թշնամանքով, մեծ ու փոքր չճանաչելով, ընդդիմադիրներին, իրենց քննադատողներին, ուրիշներին ուղղված թուքումուր են թափում, «շեֆին» հաճոյանալով եւ բարեվարքության տարրական կանոններին ասես անտեղյակ՝ հանդգնում են անգամ Ամենայն Հայոց կաթողիկոսին արհամարհաբար Կտրիճ Ներսիսյան կոչել, վիրավորելով համայն հայ հավատացյալ հանրության զգացմունքները, եւ այսպես չգիտես մինչեւ երբ:

Իրենք երեւի մոռանում են ու արժե հաճախ հիշեցնել, որ իշխանության տերն, այո, իրենք չեն, Հայաստանի ժողովուրդն է, իսկ իրենք որպես պաշտոնյաներ, այսինքն ծառայողներ, վերջինիս կողմից ընդամենը վարձված են՝ նրան (ոչ թե իրենց առաջնորդին) ծառա-յե-լու համար: Եվ երեւի համարելով, որ շատ լավ են ծառայել (չմանրամասնենք), որոշել ու իրենք իրենց ֆինանսապես պարգեւատրել են, այն էլ ինչպե՜ս: Թե ով ինչքան՝ չկրկնենք, այդ մասին բավականաչափ խոսվել է: Հիշենք սոսկ, որ միայն վարչապետը, ինչպես հայտարարվել է, մեկ տարվա համար իր աշխատավարձից բացի ստացել է 14 մլն դրամին մոտ լրացուցիչ վճար:

**Ալեն Սիմոնյանը՝** ԱԺ նախագահը, ըստ մամուլի հրապարակումների, ասել է մոտավորապես հետեւյալը, թե դա մարդկանց աշխատավարձն է եւ հավաքվել ու տարվա վերջում է տրվել, օրենսդրորեն ձեւակերպված չէ, բայց կձեւակերպվի: Ասել է՝ ավելին, էլի է տրվելու: Մյուս կողմից, այդ օրերին տարածվել է նաեւ լրագրող, խմբագիր **Սեւակ Հակոբյանի** հրապարակումը, որտեղ պնդում կա, թե միայն վարչապետն ու տեղակալները, օրինակ, ստացել են ՀՀ սահման պահողի 36 տարվա աշխատավարձը միանգամից, ուսուցչի 51 տարվա աշխատավարձը միանգամից: Իհարկե, խնդիրը միայն նրանց ստացածը չէ: Լավ կլիներ՝ համապատասխան պաշտոնյաներն այս առնչությամբ հրապարակավ հիմնավոր պատասխանեին երկու հարցի: Մեկ՝ որքանո՞վ է նշված հաշվարկը ճիշտ կամ գոնե իրականության հետ որեւէ աղերս ունեցող, եւ երկրորդ՝ եթե անգամ դա իրականությանը մոտ չէ՝ արդա՞ր են համարում արդյոք մեր երկրի ընդհանուր սոցիալական վիճակին առնվազն անհամատեղելի չափի այս ինքնապարգեւատրում-վճարները, երբ նվազագույն պետական աշխատավարձը հանրապետությունում 75 հազար դրամ է, այն էլ՝ շատերի համար անհասանելի:

Իսկ որ անվերջ թմբկահարում են, թե ուսուցիչներ կան՝ այսքան ու այսքանից 500 հազար եւ ավելի աշխատավարձ են ստանում, թող ասեն նաեւ, թե դա ամբողջ ուսուցչական համակազմի քանի՞ տոկոսն է կազմում եւ այն էլ՝ ի՞նչ




լրացուցիչ հնարավորությունների ու ծանրաբեռնվածությունների հաշվին է եղել: Ամբողջ Շիրակի մարզում, օրինակ, 500 հազար ստացող ընդամենը 2 ուսուցիչ կա: Իսկ ինչքա՞ն է սովորական ուսուցչի՝ ճնշող մեծամասնության աշխատավարձի սահմանված դրույքաչափը՝ 119 հազար կամ մի փոքր ավելի, չէ՞:

Շատ տարիներ առաջ «Գրական թերթում», Լենինական-Գյումրու անվանի մտավորական, գիտության դոկտոր, ԳԱԱ երկրաֆիզիկայի եւ սեյսմաբանության ինստիտուտի նախկին երկարամյա տնօրեն լուսահոգի **Ստեփան Վարդգեսի Բաղդալյանի**՝ Երեւանում Կարեն Դեմիրճյանի դասընկերոջ հոդվածում բերված տեղեկությամբ, ժամանակին Հայաստանի ղեկավար **Կ. Դեմիրճյանը** ստանում էր 500, իսկ ինքը՝ գիտության դոկտորը, նրանից 50 ռուբլով ավելի՝ 550 ռուբլի: Իհարկե՝ որովհետեւ գիտությունն ու դոկտորը կարեւորվում էին, որովհետեւ այս հարցում ամեն ինչ հստակ սահմանված էր եւ ամեն ինչով հանդերձ կային նաեւ որոշակի բարոյական սահմաններ, որոնք չէին արհամարհվում եւ անտեսվում:

Բյուջետային, պետական աշխատավարձերի խելամիտ կանոնակարգումը, դրա արդարացիության ապահովումը մեր սոցիալական պետությունում, ըստ ամենայնի, խնդիր է մնում: Անցած երեք եւ կես տասնամյակների ընթացքում ՀՀ իրարահաջորդ տարբեր կառավարությունները երբեմն կամայականորեն են որոշել նման հարցերը, անհամեմատելի ավելացնելով, մասնավորապես, իրենց իշխանության հենարան ուժայինների վարձատրությունը: Հիշենք դատավորների աշխատավարձերի պարբերական մեծաչափ ավելացումները (ինչպես եւ մանկավարժի մեկ տարվա կենսաթոշակի չափը գերազանցող նրանց ամսական թոշակները), եթե չեմ սխալվում՝ մի անգամ դատախազների աշխատավարձերի 11-ապատիկ ավելացումը եւ այլն: 2013 թվականի դեկտեմբերի 12-ին ընդունվել է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» կարծես թե կանոնակարգող օրենքը, բայց այնտեղ շրջանառվող հիմնական հասկացությունների առատությունը՝ հիմնական աշխատավարձ, լրացուցիչ աշխատավարձ, հավելում, հավելավճար, պարգեւատրում, բազային աշխատավարձ, գործակից, թվում է՝ տեղ են թողնում դրանց կամայական մեկնաբանությունների, բյուջեի ֆինանսական միջոցների՝ երկրի ընդհանուր իրավիճակին անհամապատասխան, անարդար տնօրինման: Ինչի առնվազն զարմացած ականատեսը եղանք այս անգամ:

Այո, թող պետական պաշտոնյաների աշխատավարձը մրցունակ լինի; Բայց պետք է կարծել՝ ամբողջ խնդիրը լուրջ վերաիմաստավորման եւ դրանից բխող լուծումների, ավելի հստակ եւ ամբողջական կանոնարկման կարիք ունի: Դա պատկան մասնագետների գործն է: Բայց չի՞ կարելի, ասենք, սահմանել բոլոր պետական աշխատավարձերի մի հստակ սանդղակ, հիմքում դնելով հանրապետության նվազագույն աշխատավարձը եւ որոշելով դրա համեմատ ըստ պաշտոնների, օրինակ, 1-ից 10 գործակիցներ: Ենթադրենք 1 գործակցով վարձատրվող՝ դպրոցի պահակի աշխատավարձը սահմանվում է նվազագույն աշխատավարձի չափով՝ 75 հազար դրամ, իսկ երկրի բարձրագույն ղեկավար պաշտոնյայինը՝ դրանից 10-ապատիկ ավելի: Չբացառելով նաեւ առանձին կարգի աշխատողների հավելավճարներն ու պատվո վճարները: Եվ այս դեպքում երբ երկրի մակրոտնտեսական հնարավորությունները թույլ տան բարձրացնել վարձատրության նվազագույն շեմը, ինքնըստինքյան համամասնորեն կբարձրանա բոլորինը՝ վերից վար:

Աշխատավարձերի հետ միասին խնդիր է նաեւ թոշակների սոցիալապես արդար հարաբերակցության սահմանումը:

Եթե ուզում ենք արդար ու իսկապես զարգացող, ամուր երկիր ստեղծել եւ ունենալ, ապա գուցե իրոք ամենաբարձրը պետք է վարձատրվեն մեր մանկավարժ ուսուցիչն ու լավ գիտնականը, բժիշկը եւ բանակի սպան:

ԳՈՒՅԺ

## Կյանքից հեռացավ ԹՄՄ երկարամյա ղեկավարներից Մարո Պետրոսյանը



Խոր ցավով տեղեկացնում ենք, որ երկարատեւ հիվանդությունից հետո կյանքից հեռացել է Թեքեյան մշակութային միության երկարամյա ղեկավարներից Մարիամ (Մարո) Պետրոսյանը, Հյուստոնում (ԱՄՆ, Տեխասի նահանգ) գտնվող իր բնակարանում, 84 տարեկան հասակում, շրջապատված իր ամուսնու՝ Սերոբ Պետրոսյանով, զավակներով ու թոռներով, կատարյալ խաղաղության մեջ:

Ծնվել էր Բեյրութում, ավարտել տեղի ՀԲԸՄ Դարուհի Հակոբյան վարժարանը, ստացել բարձրագույն կրթություն, աշխատել ՄԱԿ-ի եւ միջազգային այլ կազմակերպությունների մեջ, տիրապետում էր, բացի հայերենից, անգլերեն, ֆրանսերեն եւ արաբերեն լեզուներին, անխոնջ նվիրումով ծառայել է մշակույթի ու կրթության ոլորտներում, ուժեղ կամքի տեր ու հետեւողական նկարագրով, երկար տարիներ որպես գանձապահ եւ ֆինանսների պատասխանատու անվարձահատույց մաս է կազմել ԹՄՄ Կենտրոնական վարչության:

Ավելի մանրամասն ներկայացումը նրա կենսագրության ու գործունեության վերապահելով մեր առաջիկա համարներից մեկին՝ խմբագրությունս խորազգած ցավակցություններ է հայտնում ամուսնուն, զավակներին, գործընկերներին, Թեքեյանական ողջ ընտանիքին:

«Ազգ»

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԼԵ տարի
Հրատարակիչ
**«ՎԱՀԱՆ ԹԷՔԷՅԱՆ» սոցիալ-մշակութային հիմնադրամ**
Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48
**e-mail:** info@azg.am
azgdaily@gmail.com
**www.azg.am**
*Գլխաւոր խմբագիր*
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ
*Հաշվապահութիւն (գովազդ)*
հեռ. **010 582960**
*Համակարգչային շարուածքը՝* «Ազգ» թերթի
"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Վահան Թէքեյան» սոցիալ-մշակութային հիմնադրամ», Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001: Պետական գրանցման վկայականի համարը՝ 286.110.1041780, տրուած՝ 25.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 29.01.2026, գինը՝ 200 դրամ, տպաքանակը՝ 800 օրինակ, տպագրւում է «Գինդ» տպարան ՍՊԸ, ք. Երեւան, Բագրատունյաց 70ա: